

ACSES
ARMENIAN CENTER FOR SOCIO-ECONOMIC STUDIES

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՃՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երևան 2025

Բովանդակություն

Հապավումներ 2
Գծապատկերներ 2
Աղյուսակներ 3
Ներածություն 4
Գլուխ 1. Չինաստանի դերը Հայաստանի արտաքին առևտրում 6
1.1 Հայաստանի և Չինաստանի միջև առևտրի ոլորտի կարգավորումները 6
1.2 Հայաստանի ներմուծումը Չինաստանից 8
1.3 Հայաստանի արտահանումը Չինաստան 13
1.4 Առևտրային հարաբերությունների հեռանկարները 19
Գլուխ 2. Չինական կապիտալի դերը Հայաստանի տնտեսության մեջ 22
Գլուխ 3. Չինաստանի և Հայաստանի միջև զբոսաշրջության միտումները 32
Գլուխ 4. Չինաստանի արտաքին օգնությունը Հայաստանին 37
4.1 Չինաստանի արտաքին օգնության էվոլյուցիան 37
4.2 Չինաստանի մարդասիրական օգնությունը Հայաստանին 40
Գլուխ 5. Չինաստանի ներկայությունն Հայաստանի կրթական համակարգում 49
5.1. Չինաստանի ներկայությունը համաշխարհային կրթական ասպարեզում 49
5.2. Չինաստանի աճող ներկայությունը Հայաստանի կրթական համակարգում 53
Գլուխ 6. Ռազմավարական գործընկերություն. Հայաստան-Չինաստան 2025 64
Եզրակացություններ 70

Հապավումներ

ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԺ	Ազգային Ժողով
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
ԱՄԷ	Արաբական Միացյալ Էմիրություններ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՏԳ ԱԱ	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԵՆԱԲ	Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկ
ԵՊԼՀ	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԳԱԱ	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՄԱԿ	Միացյալ Ազգերի Կազմակերպություն
ՇՀԿ	Շանհայի համագործակցության կազմակերպություն
ՉԺՀ	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

Գծապատկերներ

Գծապատկեր 1. Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի ներմուծման մեջ 2010-2024 թթ-ին 9
Գծապատկեր 2. Հայաստանի ներմուծումը Չինաստանից 2010-2024 թթ-ին..... 10
Գծապատկեր 3. Հայաստանի ներմուծումը Չինաստանից ըստ ապրանքային խմբերի 12
Գծապատկեր 4. Չինաստանից Հայաստանի ներմուծման կառուցվածքը 2024 թ-ին.....13
Գծապատկեր 5. Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի արտահանման մեջ 2010-2024 թթ-ին.....14
Գծապատկեր 6. Հայաստանից Չինաստան արտահանումը 2010-2024 թթ-ին.....15
Գծապատկեր 7. Հայաստանից Չինաստան արտահանվող ամենամեծ աճ գրանցած 5 ապրանքները՝ 2010-2021 թթ-ին (ձախ գծապատկեր) և 2022-2024 թթ-ին (աջ գծապատկեր) 16
Գծապատկեր 8. Հայաստանի արտահանումը Չինաստան ըստ ապրանքային խմբերի 17

Գծապատկեր 9. Հայաստանից պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանումն ըստ ներմուծող երկրների 2010-2024թթ-ին 18
Գծապատկեր 10. ՀՀ ՕՈՒՆ-ների մաքուր պաշարներն ըստ երկրների 2024թ-ի վերջի դրությամբ 22
Գծապատկեր 11. ՀՀ ՕՈՒՆ-ների մաքուր պաշարներն ըստ տնտեսական գործունեության տեսակների 2024թ-ի վերջի դրությամբ 23
Գծապատկեր 12. Չինաստանից Հայաստան ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքը 2019-2024 թթ-ին 25
Գծապատկեր 13. Չինաստանից Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը 2020-2024 թթ-ին 32
Գծապատկեր 14. Հայաստան այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը 2024 թ-ին 33
Գծապատկեր 15. Հայաստանին Չինաստանից տրամադրված արտաքին օգնությունը 2010-2024թթ-ին 43
Գծապատկեր 16. Չինաստանի կառավարության օգնությունը Հայաստանին 2010-2024 թթ-ին 44
Գծապատկեր 17. Չինաստանի կողմից Հայաստանին տրամադրված օգնությունը ըստ ապրանքային խմբերի 2010-2024 թթ-ին 46
Գծապատկեր 18. Հայաստանից միջկառավարական համաձայնագրերի հիման վրա Չինաստանում սովորող ուսանողների թիվը 58
Գծապատկեր 19. Հայկական բուհերի և հետազոտական ինստիտուտների և չինական կազմակերպությունների միջև կապերի քանակը 60

Աղյուսակներ

Աղյուսակ 1. Չինաստանի կառավարության կողմից 2019թ-ի համաձայնագրի շրջանակում հայ ուսանողներին տրամադրվող տարեկան կրթաթոշակները 57

Ներածություն

Վերջին տասնամյակի ընթացքում Չինաստանը ընդլայնել է իր ներկայությունը Հայաստանում՝ հիմնականում օգտագործելով փափուկ ուժի (soft power) գործիքներ: Հայաստանը, որը գտնվում է Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում, իր ռազմավարական դիրքով կարևոր գործընկեր է Չինաստանի՝ Եվրասիայում իր ազդեցությունն ամրապնդելու քաղաքականության համար:

Տնտեսական տեսանկյունից, Չինաստանը դարձել է Հայաստանի ներմուծման երկրորդ խոշոր աբյուրը՝ միաժամանակ ամրապնդելով իր դերը որպես Հայաստանի արտահանման կարևոր ուղղություն: Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի արտահանման մեջ կտրուկ աճել է՝ 2010թ-ի ընդամենը 3%-ից 2021թ-ին հասնելով 13%-ի: Ընդ որում, արտահանման մեջ գերակշռում է պղնձի հանքաքարը, որը հանդիսանում է Հայաստանի հիմնական արտահանման ապրանքներից մեկը: Առևտրային հարաբերություններից բացի, Չինաստանի ազդեցությունը ակնհայտ է վերջին տասնամյակում իրականացված խոշոր ենթակառուցվածքային նախագծերից: Չինացի կապալառուները Հայաստանում ներգրավված են երկրի ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք նախաձեռնություններում, այդ թվում՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի, Շիրակի մարզում գտնվող Կապսի ջրամբարի և Հայաստանի առաջին խոշոր արդյունաբերական արևային էլեկտրակայանի շինարարական աշխատանքներում:

ՀՀ-Չինաստան մարդկանց միջև կապերը (people-to-people) ևս ակտիվացել են՝ արտացոլելով Չինաստանի ազդեցության ընդլայնման միտումները: Վերջին երեք տարիների ընթացքում Չինաստանից Հայաստան զբոսաշրջային այցելությունների թիվը վեց անգամ աճել է, որի արդյունքում 2024թ-ին Չինաստանը զբաղեցրել է 7-րդ տեղը Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թվով, մինչդեռ 2022թ-ին այն 21-րդն էր: Կրթական և մշակութային համագործակցությունն ևս խորացել է: Հայաստանում գործում է տարածաշրջանի առաջին Կոնֆուցիոսի ինստիտուտը, ինչպես նաև հիմնվել է հայ-չինական բարեկամության դպրոց՝ լեզվի և մշակութային փոխանակումը խթանելու նպատակով: Չինարեն սովորողների թիվը Հայաստանում կայուն աճ է արձանագրում, իսկ Չինաստանում ուսանելու, վերապատրաստումների մասնակցելու և մասնագիտական ու կրթական զարգացման հնարավորությունները շարունակաբար ընդլայնվում են:

Այս զեկույցի նպատակն է ուսումնասիրել Չինաստանի աճող ներկայությունը Հայաստանի սոցիալական և տնտեսական կյանքում, վերլուծել դրա զարգացման դինամիկան և բացահայտել այդ ազդեցության հիմքում ընկած մեխանիզմները:

Զեկույցը բաղկացած է վեց գլխից, ներածությունից և եզրակացությունից: Այն անդրադառնում է Չինաստանի դերին Հայաստանի արտաքին առևտրում և երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարներին, Հայաստանի տնտեսությունում չինական կապիտալի ներկայությանը, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտում ձևավորված միտումներին: Զեկույցը հետազոտում է Չինաստանի մարդասիրական օգնության դինամիկան՝ թե՛ համաշխարհային մակարդակով, թե՛ Հայաստանի համատեքստում, ներկայացնում է Չինաստանի ներկայությունը համաշխարհային կրթական միջավայրում և մասնավորապես Հայաստանում: Վերջում այն անդրադառնում է տարածաշրջանում կնքված ռազմավարական գործընկերության համաձայնագրերին, այդ թվում՝ 2025թ-ին հաստատված Հայաստան–Չինաստան ռազմավարական գործընկերությանը:

Գլուխ 1. Չինաստանի դերը Հայաստանի արտաքին առևտրում

1.1 Հայաստանի և Չինաստանի միջև առևտրի ոլորտի կարգավորումները

Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր 2021-2026թթ-ի ծրագրում շեշտում է Չինաստանի հետ հարաբերությունների կարևորությունը և վերահաստատում է դրանք տարբեր նախաձեռնությունների միջոցով ամրապնդելու իր հանձնառությունը:[1] Հայաստանի և Չինաստանի միջև երկկողմ տնտեսական հարաբերությունները ձևավորվել են Խորհրդային Միության փլուզումից հետո: **1992թ-ին Չինաստանը Հայաստանում հիմնել է իր առևտրային ներկայացուցչությունը**: Նույն թվականին՝ 1992թ-ի հունվարին, Երևանում ստորագրվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև առաջին պաշտոնական միջկառավարական փաստաթուղթը՝ առևտրատնտեսական համագործակցության համաձայնագիրը[2]: Այս համաձայնագիրը սահմանել է երկու երկրների մտադրությունը՝ հաստատելու և զարգացնելու երկարաժամկետ առևտրատնտեսական հարաբերություններ՝ ստեղծելով բարենպաստ հարկային և մաքսային կանոնակարգեր, պաշտպանելով միմյանց կապիտալ ներդրումները, խթանելով առևտրատնտեսական կապերը երկու երկրների ընկերությունների և բիզնեսների միջև՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա, սահմանելով վճարային, հաշվարկային և արժույթի փոխանակման կարգավորումներ, նպաստելով առևտրային տոնավաճառների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների կազմակերպմանը՝ ուղղված երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև աջակցելով միմյանց տարածքում տնտեսական և առևտրային կազմակերպությունների ստեղծմանը և գործունեությանը:[3] երկու կառավարությունները ստորագրել են ավելի քան 70 համաձայնագիր,

---

[1] ՀՀ Կառավարություն, «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագիր (2021-2026)»: bit.ly/4bLEKYh

[2] (Առաջին հղում) Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարություն (ԱԳՆ), «Երկկողմ հարաբերություններ. Չինաստան», օգոստոս 26, 2024, մուտք հունվար 22, 2025: https://www.mfa.am/hy/bilateral-relations/cn

[3] ARLIS. "Առևտրատնտեսական համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև". հունվար 9, 1992. https://bit.ly/3Fk3s5Q

արձանագրություն, հուշագիր և այլ փաստաթղթեր, որոնք ուղղված են երկկողմ համագործակցության ամրապնդմանը և ընդլայնմանը: [4]

1999թ-ին ձևավորվեց հայ-չինական առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական համատեղ հանձնաժողովը, որի նպատակն է խորացնել երկկողմ տնտեսական կապերը: Համատեղ հանձնաժողովի վերջին 11-րդ նիստը տեղի է ունեցել 2023թ-ի հունիսի 7-ին Պեկինում: Բացի այդ, ավելի քան մեկ տասնամյակ գործում է **Չինաստան-Հայաստան բարեկամական խումբ կազմված ՀՀ ԱԺ անդամներից**, որը պարբերաբար այցելում է Չինաստան և հյուրընկալում չինացի պաշտոնյաների Հայաստանում՝ տարբեր հարցեր քննարկելու և երկկողմ հարաբերությունները ամրապնդելու համար:

Հայաստանի և Չինաստանի միջև առևտրի զարգացման և խթանման նպատակով՝ **2015թ-ին երկու երկրների միջև ստորագրվել է մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին համաձայնագիր**: Համաձայնագրով կողմերը պարտավորվում են միմյանց տրամադրել փոխադարձ օգնություն՝ մաքսային օրենսդրության ճիշտ կիրառումն ապահովելու, մաքսային օրենսդրության կիրառմանը վերաբերող որոշումներով և փաստաթղթերով միմյանց հետ կիսվելու, ինչպես նաև այլ հարցերում:[5]

2017թ-ին՝ գործարար նախաձեռնությունների ակտիվացման և առևտրատնտեսական համագործակցության ընդլայնման նպատակով, Հայաստանի Կառավարությունը Չինաստանում ստեղծել է ՀՀ առևտրական կցորդի պաշտոնը:[6] Նույն տարում Չինաստանում հիմնվել է Հայաստանի Առևտրաարդյունաբերական պալատի պաշտոնական ներկայացուցչություն, որի նպատակն է ամրապնդել հայ-չինական տնտեսական համագործակցությունը, պաշտպանել հայկական բիզնեսի շահերը, խթանել հայկական արտադրանքի մուտքը

[4] (Հերթական հղում) ԱԳՆ. «Երկկողմ հարաբերություններ. Չինաստան»
[5] ARLIS, «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին», հունվար, 2016: https://bit.ly/3DBkqMM
[6] Հայաստանի Հանրային Ռադիո. "Armenia to appoint Trade Attaché to China". Փետրվարի 2, 2017. Մուտք՝ մարտի 12, 2025. bit.ly/3R6iNti

չինական շուկա և աջակցել առևտրային ու ներդրումային գործընթացների հետ կապված խնդիրների լուծմանը:[7]

1.2 Հայաստանի ներմուծումը Չինաստանից

Վերջին տասնամյակներում Հայաստանի արտաքին առևտրի կառուցվածքը զգալիորեն փոխվել է: 2015թ-ին Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) անդամակցելը նպաստել է անդամ երկրների, հատկապես Ռուսաստանի հետ առևտրի ընդլայնմանը: Արդյունքում՝ Ռուսաստանի մասնաբաժինը Հայաստանի ներմուծման մեջ 2014թ-ի 26%-ից աճել է մինչև 32%՝ 2023թ-ին, իսկ 2024թ-ին՝ արտաքին գործոնների ազդեցությամբ, հասել 55%-ի: Այնուամենայնիվ, այս փոփոխությունների ֆոնին **Չինաստանը շարունակել է մնալ Հայաստանի առանցքային առևտրային գործընկերներից մեկը՝ պահպանելով իր դիրքը որպես ներմուծման երկրորդ խոշոր աղբյուր**: Նրա տնտեսական ներկայությունը երկրի առևտրի կառուցվածքում շարունակաբար ընդլայնվել է. եթե 2010թ-ին Չինաստանը ապահովում էր Հայաստանի ներմուծման 11%-ը, ապա 2021թ-ին այդ ցուցանիշը հասել է 16%-ի: 2024թ-ին մասնաբաժինը նվազել է մինչև 10%, ինչը հիմնականում պայմանավորված է ոչ թե Չինաստանի դիրքի թուլացմամբ, այլ մյուս գործընկեր երկրներից, մասնավորապես Ռուսաստանից ներմուծման աճով:

[7] Արմենպրես, «Չինաստանում բացվել է Հայաստանի Առևտրաարդյունաբերական պալատի պաշտոնական ներկայացուցչություն», հունիսի13, 2017, մուտք՝ մարտի 12, 2025: https://tinyurl.com/57yskt2w

Գծապատկեր 1. Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի ներմուծման մեջ 2010-2024 թթ-ին



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Թեև վերջին տարիներին Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի ներմուծման մեջ որոշ չափով նվազել է, սակայն ներմուծման ծավալը զգալիորեն աճել: 2019թ-ին՝ ՔՈՎԻԴ-19 համավարակից առաջ, Հայաստանի ներմուծումը Չինաստանից կազմել էր 748 միլիոն դոլար, ինչը 86%-ով ավել էր, քան 2010թ-ին: 2020-2024թթ-ի ընթացքում Չինաստանից ներմուծումն աճել է 2.6 անգամ՝ հասնելով 1,669 միլիոն դոլարի: Այս կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է 2022-2024թթ-ին Հայաստանից Ռուսաստան վերաարտահանման աճով: 2022թ-ին ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով արևմտյան երկրների սահմանած տնտեսական պատժամիջոցները սահմանափակել են Ռուսաստանի ներմուծման հնարավորությունները: Հաշվի առնելով, որ Հայաստանը և Ռուսաստանը տնտեսական միություն մաս են կազմում՝ փոխադարձ պարտավորություններով և առանց մաքսատուրքերի առևտրով, Հայաստանը սկսել է երրորդ երկրներից, այդ թվում՝ Չինաստանից, ապրանքներ ներմուծել և դրանք վերաարտահանել Ռուսաստան, ինչը նպաստել է ներմուծման զգալի աճին: Սա, սակայն, չի նշանակում, որ վերաարտահանված բոլոր ապրանքները ենթակա են միջազգային պատժամիջոցների:

Ավելին, միջազգային պատժամիջոցների շրջանցումը կանխելու և վերաարտահանման նպատակով չարաշահումների հնարավորությունը բացառելու համար Հայաստանի կառավարությունը զգալի միջոցներ է ձեռնարկել՝ վերահսկողությունն ամրապնդելու և համապատասխանությունը ապահովելու

նպատակով: 2023թ-ի մայիսին ուժի մեջ է մտել կառավարության որոշում, որով արգելվում է երկակի նշանակության ապրանքների արտահանումը:[8] Բացի այդ, խստացվել է մաքսային վերահսկողությունը, և Հայաստանը սերտորեն համագործակցում է միջազգային գործընկերների հետ՝ իր առևտրային ուղիներում հնարավոր ցանկացած չարաշահում կանխելու և վերահսկելու նպատակով:

Գծապատկեր 2. Հայաստանի ներմուծումը Չինաստանից 2010-2024 թթ-ին



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Հայաստանը Չինաստանից հիմնականում ներմուծում է մեքենաներ և մեխանիկական սարքավորումներ (օրինակ՝ սառնարաններ, օդորակիչներ, տվյալների մշակման մեքենաներ և այլն), էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ (օրինակ՝ հեռախոսներ, մոնիտորներ, ջեռուցիչներ և այլն), ինչպես նաև հագուստ և հագուստի պարագաներ: Վերջին 15 տարիների ընթացքում սրանք Չինաստանից Հայաստան ներմուծվող հիմնական ապրանքային խմբերի շարքում են եղել: Մասնավորապես՝ 2010-2024թթ-ին էլեկտրական մեքենաները կազմել են Չինաստանից ներմուծման միջին տարեկան 22%-ը, մեքենաները և մեխանիկական սարքավորումները՝ 20%-ը, իսկ հագուստը և հագուստի պարագաները՝ 7%-ը:

Վերգետնյա տրանսպորտային միջոցների ներմուծումը (ԱՏԳ ԱԱ 87) զգալիորեն աճել է 2021, 2022 և 2023 թվականներին: 2021թ-ին ներմուծումը նախորդ տարվա համեմատ աճել է 2.3 անգամ, այնուհետև 2022թ-ին գրանցվել է 48%-անոց աճ, իսկ 2023թ-ին՝ ևս 2.3 անգամ աճ: Այս արագ աճի արդյունքում 2023 թվականին

[8] ARLIS, Կառավարության որոշում N-808-Ն , մայիսի 25, 2025: https://is.gd/H27jOF

վերգետնյա տրանսպորտային միջոցների մասնաբաժինը Հայաստանի ընդհանուր ներմուծման մեջ հասել է 12%-ի՝ 2020թ-ի 4%-ի փոխարեն: 2024թ-ին ներմուծման աճի տեմպը դանդաղել է, սակայն նախորդ տարվա համեմատ այնուամենայնիվ գրանցվել է 5% աճ, ինչն ապահովել է 12% մասնաբաժինը:

2021թ-ի աճը հիմնականում պայմանավորված էր հասարակական տրանսպորտի համար նախատեսված շարժիչային տրանսպորտային միջոցների ներմուծման աճով (30-ապատիկ աճ, ԱՏԳ ԱԱ 8702):

Վերջին տարիներին Չինաստանից էլեկտրական շարժիչով ավտոմեքենաների ներմուծման աճը դարձել է Հայաստանի ավտոմեքենաների ներմուծման կտրուկ աճի կարևոր գործոններից մեկը: Վերջին տարիներին Հայաստանում ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված էլեկտրական շարժիչով մեքենաների ներմուծումը խրախուսելուն: Հաշվի առնելով, որ էլեկտրական շարժիչով մեքենաները (ԱՏԳ ԱԱ 870380) կազմում են Հայաստանի չինական ավտոմեքենաների ընդհանուր ներմուծման զգալի մասնաբաժինը, այս քաղաքականությունը հավանաբար կարևոր դեր է խաղացել այդ աճի մեջ: 2019թ-ին էլեկտրական շարժիչով մեքենաների ներմուծումը մինչև 2022թ-ի հունվարի 1-ը ազատվել էր մաքսատուրքերից, ինչը շոշափելի արդյունքներ է ունեցել: Օրինակ՝ եթե 2018թ-ին Հայաստան էր ներմուծվել ընդամենը 5 էլեկտրական շարժիչով ավտոմեքենա, ապա 2021թ-ին դրանց թիվը հասել էր 1,893-ի[9]: 2022թ-ին սահմանվել են նոր արտոնություններ, որոնց համաձայն Հայաստանը կարող էր ներմուծել 2022թ-ին 7,000, իսկ 2023թ-ին՝ 8,000 էլեկտրական շարժիչով մեքենա առանց մաքսատուրքերի[10][11]: Նման քվոտաներ սահմանվել են նաև 2024 և 2025 թվականների համար:

[9] Էներգետիկայի Հայկական Գործակալություն, «ՀՀ էլեկտրական շարժիչով մեքենաների ներմուծման տեմպերը 2023թ. դրությամբ»: https://bit.ly/40FJ4Eu
[10] 8703 80 000 2
[11] Առաջին Լրատվական Ալիք, «ՀՀ ներմուծվող էլեկտրաշարժիչով մեքենաների նկատմամբ սակագնային արտոնություն կկիրառվի», ապրիլի 15, 2022, մուտք՝ մարտի 12, 2025: https://is.gd/K4qMlr

Գծապատկեր 3. Հայաստանի ներմուծումը Չինաստանից ըստ ապրանքային խմբերի



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան
Նշում՝ Ապրանքները խմբավորված են ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգչի

2024թ-ի տվյալների ավելի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանը Չինաստանից ներմուծել է բավականին բազմազան ապրանքներ, որոնցից առաջատարն ավտոմատ տվյալների մշակման մեքենաներն են (ընդհանուր ներմուծման 8%-ը), որին հաջորդում են հեռախոսներն ու կապի սարքերը (6%) և ուղևորատար ավտոմեքենաները և կիսահաղորդիչները (յուրաքանչյուրը 4%-ը):

Գծապատկեր 4. Չինաստանից Հայաստանի ներմուծման կառուցվածքը 2024 թ-ին



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան
Նշում՝ Ապրանքները խմբավորված են ըստ ԱՏԳ ԱԱ 4-նիշ դասակարգչի

1.3 Հայաստանի արտահանումը Չինաստան

Չինաստանը ոչ միայն Հայաստանի հիմնական ներմուծման գործընկերն է, այլև արտահանման հիմնական ուղղություններից մեկը: Տարիների ընթացքում Չինաստանի դերակատարությունը Հայաստանի արտահանման մեջ նկատելիորեն ուժեղացել է: Եթե 2010թ-ին Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի արտահանման մեջ ընդամենը 3% էր, ապա 2020 և 2021 թվականներին այն հասել էր համապատասխանաբար 11%-ի և 13%-ի: Սակայն 2022թ-ից հետո՝ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով, Հայաստանի արտահանման կառուցվածքը զգալի փոփոխությունների է ենթարկվել: Դեպի Ռուսաստան վերաարտահանման ծավալների աճը, ինչպես նաև Հոնկոնգ և ԱՄԷ ուղղություններով արտահանման ընդլայնումը (2023-2024թթ.) որոշ չափով նվազեցրել է Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի արտահանման կառուցվածքում: **2021թ-ին Չինաստանը Հայաստանի երկրորդ խոշորագույն արտահանման ուղղությունն էր՝ 13% մասնաբաժնով: Չնայած այս մասնաբաժինը 2024թ-ին նվազել է մինչև 8%, Չինաստանը մնացել է**

Հայաստանի արտահանման հինգ առաջատար ուղղությունների շարքում, ինչը վկայում է դրա շարունակական կարևորության մասին:

Հարկ է նշել, որ 2023 և 2024 թվականներին ԱՄԷ և Հոնկոնգ արտահանման աճը հիմնականում պայմանավորված էր Հայաստանի ոսկու և ոսկերչական արտադրատեսակների արտահանման կտրուկ աճով: Այս միտումը ձևավորվեց այն բանից հետո, երբ Ռուսաստանը 2023թ-ին սահմանեց արտահանման մաքսատուրքեր՝ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներ ոսկի արտահանելու համար: Ստեղծված իրավիճակը նոր հնարավորություններ բացեց հայկական արտադրողների համար: Նրանք սկսեցին ներմուծել կիսամշակված ոսկի, այն տեղում վերամշակել և արտահանել այն շուկաներ, որոնք նախկինում հանդիսանում էին ռուսական ոսկու հիմնական գնորդները[12]:

Գծապատկեր 5. Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի արտահանման մեջ 2010-2024 թթ-ին



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Չնայած Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի արտահանման մեջ վերջին 15 տարիների ընթացքում տատանվել է, արտահանման ծավալները զգալիորեն աճել են: 2010-2024թթ-ին Հայաստանից Չինաստան արտահանումն աճել է 1,067 միլիոն

[12] Առաջին Լրատվական Ալիք, «ՀՀ ներմուծվող էլեկտրաշարժիչով մեքենաների նկատմամբ սակագնային արտոնություն կկիրառվի», ապրիլի 15, 2022, մուտք՝ մարտի 12, 2025: https://is.gd/K4qMlr

դոլարով կամ 35.6 անգամ՝ գերազանցելով 1 միլիարդ դոլարը: Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 6-ը՝ 2024թ-ին Հայաստանի արտահանումը Չինաստան կրկնակի աճել է: Այս կտրուկ աճի հիմնական պատճառը կիսամշակված ոսկու արտահանումն էր, ինչն իր հերթին պայմանավորված էր ԱՄԷ և Հոնկոնգ ուղղություններով արտահանման աճի վերոնշյալ գործոններով:

Գծապատկեր 6. Հայաստանից Չինաստան արտահանումը 2010-2024 թթ-ին



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Չինաստան արտահանման կառուցվածքը ուսումնասիրելու և աճի հիմնական շարժիչները պարզելու համար՝ նպատակահարմար է ժամանակաշրջանը բաժանել երկու մասի՝ մինչև 2022թ-ը և դրանից հետո: Ռուս-ուկրաինական պատերազմի բռնկումը մեծապես ձևափոխել է առևտրային հոսքերի կառուցվածքը և ուղղությունները: Սակայն միջնաժամկետ հեռանկարում ակնկալվում է, որ արտաքին առևտուրը կվերադառնա իր բնականոն հունին:

2010-2021թթ-ին Հայաստանի արտահանման աճի հիմնական շարժիչ ուժը եղել է հանքարդյունաբերությունը՝ հատկապես պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանումը: Այդ ժամանակաշրջանում այս ապրանքախմբի արտահանումն աճել է շուրջ 261 միլիոն դոլարով կամ գրեթե 11 անգամ՝ ապահովելով ընդհանուր արտահանման աճի մոտ 72 տոկոսը: Աճի երկրորդ ամենախոշոր աղբյուրը եղել է մոլիբդենի հանքաքարի և խտանյութի արտահանումը, որն աճել է շուրջ 96 միլիոն դոլարով:

2022-2024թթ-ի ընթացքում Հայաստանից Չինաստան արտահանումը գրեթե եռապատկվել է: Այս աճը հիմնականում պայմանավորված էր կիսամշակված ոսկու

արտահանմամբ, որը կազմել է ընդհանուր աճի 62%-ը: Աճի երկրորդ խոշոր խթանիչը եղել է պղնձի հանքաքարը ու խտանյութը, որը ապահովել է աճի 22%-ը: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է ոսկու արտահանման բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված էր արտաքին գործոններով և, հավանաբար, այն չի պահպանվի առաջիկա տարիներին:

Գծապատկեր 7. Հայաստանից Չինաստան արտահանվող ամենամեծ աճ գրանցած 5 ապրանքները՝ 2010-2021 թթ-ին (ձախ գծապատկեր) և 2022-2024 թթ-ին (աջ գծապատկեր)



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան
Նշում՝ Ապրանքները խմբավորված են ըստ ԱՏԳ ԱԱ 4-նիշ դասակարգչի

Վերջին տասնհինգ տարիների ընթացքում Հայաստանից Չինաստան արտահանման կառուցվածքում գերակշիռ մասը՝ տարեկան ավելի քան 90%-ը, կազմել են հանքաքարերը (ԱՏԳ ԱԱ 26), բացառությամբ 2011 և 2024 թվականների: Օրինակ՝ 2020-2024թթ-ին պղնձի հանքաքարը ու խտանյութը (ԱՏԳ ԱԱ 2603) կազմել են արտահանման միջին տարեկան 60%-ը, իսկ մոլիբդենի հանքաքարն ու խտանյութը (ԱՏԳ ԱԱ 2613)՝ շուրջ 14%: Թեև նույն ժամանակահատվածում դրանց մասնաբաժինները կրճատվել են (պղնձի հանքաքարինը՝ 67%-ից 40%, մոլիբդենինը՝ 31%-ից 3%), բացարձակ արտահայտությամբ այս ապրանքների արտահանումը զգալիորեն աճել է. պղնձի հանքաքարի արտահանումն աճել է 17 անգամ, իսկ մոլիբդենի արտահանումը՝ 9.7 անգամ: Ինչ վերաբերում է մասնաբաժինների կրճատմանը, դա պայմանավորված էր այլ ապրանքների արտահանման կտրուկ աճով:

Նշենք, որ Չինաստանի հետաքրքրությունը հայկական պղնձի նկատմամբ ձևավորվել է դեռ մի քանի տասնամյակ առաջ: Հու Ցզինտաոի նախագահության տարիներին (2002–2012) Չինաստանի կառավարությունը Հարավային Կովկասի երկրների հետ նախաձեռնել է տնտեսական համագործակցության ծրագրեր՝ զարգացման տարբեր ծրագրերի համար տրամադրելով վարկեր և ցուցաբերելով հետաքրքրություն առևտրային հարաբերությունների ընդլայնման նկատմամբ[13]:

Գծապատկեր 8.Հայաստանի արտահանումը Չինաստան ըստ ապրանքային խմբերի



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան
Նշում՝ Ապրանքները խմբավորված են ըստ ԱՏԳ ԱԱ 4-նիշ դասակարգչի

Պղնձի հանքաքարն ու խտանյութը ոչ միայն Հայաստանից Չինաստան արտահանման հիմնական ապրանքախումբն է, այլև երկրի ընդհանուր արտահանման առանցքային ապրանքներից մեկը: Մինչև 2022-2024թթ-ին Հայաստանից Ռուսաստան վերաարտահանման կտրուկ աճի պատճառով արտահանման կառուցվածքի խեղաթյուրվելը, պղնձի հանքաքարը և խտանյութը համարվում էր Հայաստանից արտահանվող հիմնական ապրանքը: 2021թ-ին այն

[13] Nadege Rolland.“China’s Ambitions in Eastern Europe and the South Caucasus”. Russie.Nei.Vissions, No. 112. Ifri. Դեկտեմբեր 2018 bit.ly/3FqiNSz

ապահովել էր Հայաստանի արտահանման 26%-ը, իսկ 2020-2021թթ-ի միջին տարեկան մասնաբաժինը կազմել էր շուրջ 21%: Պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման մասնաբաժինը կրճատվեց մինչև 12% 2022թ-ին, և հասավ 6%-ի 2023թ-ին ու 4%-ի 2024թ-ին: Այս փոփոխությունը պայմանավորված էր ոչ թե պղնձի հանքաքարի ու խտանյութի արտահանման կրճատմամբ, այլ այս ժամանակաշրջանում այլ ապրանքների վերաարտահանման աճով:

Չինաստանը երկար տարիներ եղել է հայկական պղնձի հանքաքարի հիմնական գնորդներից մեկը, ավելին՝ նրա մասնաբաժինը տարեցտարի աճում էր: 2024թ-ին Հայաստանի պղնձի հանքաքարի արտահանման 78%-ը ուղղվել է Չինաստան: Հարկ է նշել, որ պղինձը հանդիսանում է բորսայական ապրանք, ինչը նշանակում է, որ այլ հավասար պայմաններում (տրանսպորտային գին, ձուլման ծառայությունների ծախսեր և այլն) այն կարող է արտահանվել նաև այլ երկրներ:

Գծապատկեր 9. Հայաստանից պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանումն ըստ ներմուծող երկրների 2010-2024թթ-ին



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Պղնձի հանքաքարի արտահանումը կարևոր նշանակություն ունի Հայաստանի տնտեսության համար, իսկ դրա ծավալների փոփոխությունները անմիջապես անդրադառնում են երկրի տնտեսական աճի և այլ սոցիալ-տնտեսական ցուցանիշների վրա: Օրինակ՝ 2016թ-ին Հայաստանում տնտեսական աճի տեմպը նվազել էր մինչև 0.2%, ինչը պայմանավորված էր՝ մետաղների միջազգային գների անկմամբ[14]: Որպես Հայաստանի պղնձի հանքաքարի խոշորագույն ներմուծող՝

[14] Հ. Ֆանյան, Ա. Պետրոսյան, Մ. Աբրահամյան, «Բարձրացնելով Հայաստանի տնտեսական դիմակայությունը», CASE Reports No. 508 (2024). 2024. https://bit.ly/3CkXjoX

Չինաստանը ունի կարևոր դեր Հայաստանի տնտեսության մեջ, հատկապես այս համատեքստում:

1.4 Առևտրային հարաբերությունների հեռանկարները

Վերջին տարիների մի շարք զարգացումներ վկայում են, որ Հայաստանի և Չինաստանի միջև առևտրային հարաբերություններն ավելի են ամրապնդվելու: **ԵԱՏՄ-ն, որի անդամ է Հայաստանը, ակտիվորեն փոխգործակցում է Չինաստանի հետ տարբեր ձևաչափերով, այդ թվում՝ ԲՐԻԿՍ-ի (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, Հարավային Աֆրիկա), Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ), «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում**[15]: Մասնավորապես, 2018թ-ի մայիսի 17-ին ԵԱՏՄ-ն և Չինաստանը ստորագրել են տնտեսական և առևտրային համագործակցության մասին համաձայնագիր, որն ուժի մեջ է մտել 2019թ-ի հոկտեմբերի 25-ին[16]: Համաձայնագրի շրջանակում ԵԱՏՄ-ն և Չինաստանը պայմանավորվել են ձեռնարկել քայլեր առևտուրը հեշտացնելու համար՝ սահմանափակելով մաքսային վերահսկողությունը և նվազեցնելով ապրանքների առևտրի համար պահանջվող փաստաթղթերի քանակը: Բացի այդ, կողմերը նպատակ ունեն ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան արդյունավետ մաքսային գործընթացներ՝ ծախսերը նվազեցնելու և ավելորդ վարչական խոչընդոտները կանխելու համար: Կողմերը նաև պարտավորվել են պարբերաբար վերանայել իրենց մաքսային ընթացակարգերը՝ դրանք պարզեցնելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Միևնույն ժամանակ, նախատեսվում է համագործակցություն մաքսային ենթակառուցվածքների բարելավման և արդիականացման ուղղությամբ, մասնավորապես՝ տեխնիկական վերահսկողության, տեղեկատվական և հեռահաղորդակցական համակարգերի, ինչպես նաև սահմանային հիմնական անցակետերի սարքավորումների մասով՝ հաշվի առնելով փոխադրումների ծավալները և գործառնական կարիքները: Համաձայնագրի ստորագրումից հետո ստեղծվել է համատեղ հանձնաժողով՝ փաստաթղթի դրույթների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

[15] ԵՏՀ, «ԵԱՏՄ-ն և Չինաստանը զարգացնում են ռազմավարական գործընկերությունը», 11 դեկտեմբեր, 2023, մուտք՝ մարտի 12, 2025: https://bit.ly/3DpOESS

[16] ԵՏՀ. "Agreement on Economic and Trade Cooperation Between the EEU and its Members States, of the One Part, and the People's Republic of China, of the Other Part". Մուտք՝ մարտի 12, 2025. bit.ly/3Dw0H0X

2023թ-ի փետրվարի 16-ին՝ հանձնաժողովի 3-րդ նիստի ընթացքում, կողմերը հաստատել են ԵԱՏՄ-ի և դրա անդամ պետությունների և ՉԺՀ միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման ծրագիրը (ճանապարհային քարտեզը): Ծրագիրը ներառում է երեք հիմնական բաժին[17]՝

- տրանսպորտային միջանցքների թվայնացում,
- արտաքին առևտրային քաղաքականության հարցերի շուրջ երկխոսություններ,
- ԵԱՏՄ անդամ պետությունների և Չինաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության խորացման տարբեր սցենարների ազդեցության վերաբերյալ համատեղ գիտական հետազոտությունների իրականացում:

Նախատեսվում է, 2025 թ-ին թարմացնել ճանապարհային քարտեզը[18]: 2025թ-ին նախատեսվում է թարմացնել ճանապարհային քարտեզը՝ կողմերի միջև առևտուրը լրացուցիչ խթանելու նպատակով:

Վերջին տարիներին Հայաստանը ձգտում է ընդլայնել իր ներգրավվածությունը ՇՀԿ-ի հետ, որը Չինաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի կողմից հիմնադրված միջկառավարական կազմակերպություն է և հիմնադրվել է անդամ պետությունների միջև համագործակցությունը խթանելու նպատակով, այդ թվում՝ առևտրի և տնտեսական տարբեր հարցերի ուղղությամբ: Հայաստանը ՇՀԿ-ի երկխոսության գործընկեր է դարձել 2015թ-ին[19]: Այս կարգավիճակը սահմանափակ հնարավորություններ է տալիս համագործակցության և ներգրավվածության համար: 2024թ-ին երկիրը դիմել է դիտորդի կարգավիճակ ստանալու համար, ինչը ենթադրում է ներգրավվածության ավելի բարձր մակարդակ՝ համեմատած ներկայիս երկխոսության գործընկերոջ կարգավիճակի հետ: ՇՀԿ-ում Հայաստանի ավելի խորը ներգրավվածության հեռանկարի մեկ այլ նշան է ՇՀԿ գլխավոր քարտուղարի և նրա պատվիրակության 2024թ-ի այցը, որը այս մակարդակով առաջին այցն էր Հայաստան[20]: ՇՀԿ-ում

[17] ԵՏՀ. ԵՏՀ պաշտոնական կայք. "People's Republic of China". Մուտք մարտ 12, 2025. https://bit.ly/4bMbGQj
[18] ԵՏՀ, "EAEU and PRC update road map for trade and economic cooperation". Հունվարի 10, 2025. մուտք մարտ 12, 2025: https://bit.ly/3Fl5ToR
[19] Հետք, «Հայաստանը մտադիր է Շանհայի համագործակցության կազմակերպության դիտորդ երկիր դառնալ», 18 հուլիս, 2024, մուտք մարտ 12, 2025: https://bit.ly/3Dz0tGh
[20] ԱԳՆ, «ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումը ՇՀԿ գլխավոր քարտուղարի հետ», 7 հունիս, 2024, մուտք մարտ 12, 2025: https://shorturl.at/3jHlS

ներգրավվածության ամրապնդումը հատկապես կարևոր է Հայաստանի համար, քանի որ այն ծառայում է որպես Չինաստանի հետ հարաբերությունները բարելավելու, բազմակողմանի շրջանակներում տնտեսական և դիվանագիտական կապերը խորացնելու հիմնական հարթակ:

2023թ-ին Հայաստանի կառավարությունը ներկայացրել է «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը, որը նախատեսված է տարածաշրջանային երկաթուղային ցանցի, Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք ճանապարհների միջոցով Պարսից ծոցի, Օմանի ծոցի, Սև ծովի, Կասպից ծովի և Միջերկրական ծովի միջև կապեր հաստատելու ու ամրապնդելու համար: Չինաստանի բարձրաստիճան պաշտոնյաների կարծիքով՝ Հայաստանի «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը ունի ընդհանուր եզրեր Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության հետ, ինչը ստեղծում է երկու երկրների միջև համագործակցության հնարավորություններ: Չինաստանը արդեն իսկ հետաքրքրություն է հայտնել Հայաստանի նախաձեռնության մեջ ներդրումներ կատարելու վերաբերյալ՝ այն դիտարկելով որպես «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի մաս[21]: Պետք է նշել, որ 2024թ-ի մայիսի 31-ին Չինաստանի Շանհայ քաղաքից մեկնած առաջին բեռնատարն հասել է Երևան՝ անցնելով Ղազախստանով, Ուզբեկստանով, Թուրքմենստանով և Իրանով: Ուղևորությունը տևել է 20 օրում[22]: Եթե «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը լիարժեք իրականացվի, այն կարող է զգալիորեն բարձրացնել Հայաստանի և Չինաստանի միջև առևտրաշրջանառությունը:

Ինչպես նաև հարկ է նշել, որ 2024թ-ի սեպտեմբերի 3-ից China Southern Airlines-ը սկսել է չվերթներ իրականացնել Ուրումչի-Երևան-Ուրումչի երթուղով: Չվերթները իրականացվու են շաբաթական երկու անգամ[23]: Այս զարգացումը դրական կանդրադառնա ոչ միայն զբոսաշրջային հոսքերի ավելացման, այլև առևտրի խթանման համար:

---

[21] A1+, «Չինաստանի կողմից ներդրումներ կլինեն այդ ծրագրում՝ որպես «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի մաս», 21 հոկտեմբեր, 2024, մուտք մարտ 12, 2025: https://bit.ly/43DMWaY

[22] Արմենպրես, ««Խաղաղության խաչմերուկ» նախագծի շրջանակներում Չինաստանից Հայաստան է հասել առաջին բեռնատարը», 3 հունիս, 2024., մուտք մարտ 12, 2025: https://bit.ly/4bLXMh2

[23] Զվարթնոց, «Մեկնարկել են China Southern Airlines ավիաընկերության Ուրումչի-Երևան- Ուրումչի երթուղով չվերթերը», 3 սեպտեմբեր, 2024, մուտք մարտ 12, 2025: https://shorturl.at/2wzGF

Գլուխ 2. Չինական կապիտալի դերը Հայաստանի տնտեսության մեջ

Հայաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ) նշանակալիորեն կենտրոնացված են՝ թե՛ աշխարհագրական, թե՛ ոլորտների տեսանկյունից: Քիչ քանակությամբ երկրներ ապահովում են ներդրումների գերակշիռ մասը, իսկ այդ ներդրումները հիմնականում ուղղվում են մի քանի ոլորտներ:

Ընդհանուր առմամբ, երկար տարիներ Հայաստանը դժվարություններ ունի օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում՝ գեոքաղաքական ռիսկերով, շուկայի փոքր չափով, և այլլ սահմանափակումներով պայմանավորված: Ռուսաստանը պատմականորեն եղել և մնում է Հայաստանի ներդրումային հիմնական աղբյուրը: 2024թ-ի վերջի դրությամբ Ռուսաստանին բաժին է հասել Հայաստանի տնտեսության իրական հատվածում իրականացված ՕՈՒՆ-ների մաքուր պաշարների 24%-ը, որին հաջորդում է Շվեյցարիան՝ 9% մասնաբաժնով: Ընդհանուր առմամբ, Հայաստանի ՕՈՒՆ-ները խիստ կենտրոնացված են. առաջատար հինգ ներդրողները համատեղ ապահովում են ընդհանուր ՕՈՒՆ-ների մաքուր պաշարների ավելի քանի կեսը (54.4%): Նման կենտրոնացվածությունը սահմանափակում է ներդրումային միջավայրի դիմակայնությունը և դիվերսիֆիկացիան՝ մեծացնելով երկրի կախվածությունը այս մի քանի գործընկերներից և խոցելիությունը՝ այդ երկրներում տեղի ունեցող տնտեսական կամ քաղաքական փոփոխությունների նկատմամբ:

Գծապատկեր 10. ՀՀ ՕՈՒՆ-ների մաքուր պաշարներն ըստ երկրների 2024թ-ի վերջի դրությամբ



Աղբյուր՝ Արմստատ

2024թ-ի վերջի դրությամբ ՕՈՒՆ-ների մաքուր պաշարների կեսը բաժին է հասել ֆինանսական, էլեկտրականության և գազի մատակարարման ոլորտներին: Միայն ֆինանսական հատվածին բաժին է հասել Հայաստանում իրականացված ՕՈՒՆ-ների մաքուր պաշարների 32%-ը (976 միլիարդ դրամ կամ շուրջ 2.5 միլիարդ դոլար):

Գծապատկեր 11. ՀՀ ՕՈՒՆ-ների մաքուր պաշարներն ըստ տնտեսական գործունեության տեսակների 2024թ-ի վերջի դրությամբ



Աղբյուր՝ Արմստատ

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանում ներդրումները մեծապես կախված են մի քանի երկրներից՝ Ռուսաստանի գլխավորությամբ: 2024թ-ի վերջի դրությամբ Հայաստանում իրականացված ՕՈՒՆ-երի մաքուր պաշարների կառուցվածքում Չինաստանի մասնաբաժինն ընդամենը 0.01% էր: ՕՈՒՆ-ներ զուտ ներհոսքն այդ տարում կազմել էր -16 հազար ԱՄՆ դոլար: Չինաստանից կատարված ներդրումների մեծ մասը հոսել է դեպի տնտեսության իրական հատված, մասնավորապես խմիչքների արտադրություն: Նախորդ երեք տարիներին զուտ հոսքերի բացարձակ մեծությունը աստիճանաբար նվազել է: Այլ կերպ ասած՝ հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ Չինաստանում սկսել է աճել, ակայն դեռ չի հանգեցրել դրական ներհոսքի: Իսկապես, վերջին տարիներին նկատվում է չինացի ներդրողների աճող հետաքրքրություն՝ Հայաստանում ներդրումային հնարավորությունների բացահայտման նկատմամբ: Օրինակ՝ չինացի ներդրողները հետաքրքրություն են հայտնել ներդրումներ կատարել ցեմենտի գործարանում, հիմնել տրակտորների

արտադրության գործարան և այլն[24]: Իսկ դեռևս 2023թ-ին քննարկվում էին Հայաստանում էլեկտրոմոբիլների արտադրություն սկսելու հեռանկարները[25]: Այնուամենայանիվ, այս բանակցությունները դեռևս առաջընթաց չեն գրանցել և չինական մասնակցությունը Հայաստանի ներդրումային միջավայրում շարունակում է մնալ փոքր: Ինչպես և այլ երկրների դեպքում՝ Չինաստանի պարագայում ևս ներդրումների ցածր մակարդակը պայմանավորված է Հայաստանի աշխարհագրական դիրքով, շուկայի փոքր չափերով, ինչպես նաև չինացի գործարարների շրջանում Հայաստանի մասին սահմանափակ իրազեկվածությամբ:

Այնուամենայնիվ վերջին տարիներին նկատվում են մի շարք դրական զարգացումներ, որոնք կարող են հիմք ստեղծել Հայաստանում չինական ներդրումների աճի համար: Դրանցից առավել կարևորներից են վիզային ռեժիմի ազատականացումն ու 2024թ-ին երկու երկրների միջև ուղիղ ավիաչվերթների գործարկումը: Հայաստանում ՉԺՀ գործերի նախկին ժամանակավոր հավատարմատարի խոսքերով՝ չինացի ներդրողների շրջանում աճում է հետաքրքրությունը Հայաստանի էներգետիկայի, տրանսպորտի և հանքարդյունաբերության ոլորտների նկատմամբ:[26] Բացի այդ, 2024թ-ին տեղի են ունեցել երկու կարևոր իրադարձություններ, որոնք կարող են հեշտացնել չինական բիզնեսների և զբոսաշրջիկների կողմից իրականացվող գործարքները և նպաստել երկու երկրների ֆինանսական կապերի խորացմանը: Նախ՝ Հայաստանի երկու բանկ սկսել են թողարկել UnionPay International վճարային քարտեր: UnionPay-ն չինական ազգային վճարային համակարգ է: Թեև նրանցից մեկն 2019 թ-ից արդեն սպասարկում էր UnionPay International քարտեր, սա առաջին դեպքն է, երբ հայաստանյան բանկերը Կենտրոնական բանկի թույլտվությամբ ստացել են UnionPay քարտերի թողարկման իրավունք: Երկրորդ՝ Հայաստանի ազգային վճարային համակարգը՝ ArCa-ն, ստորագրել է փոխըմբռնման հուշագիր UnionPay International-ի հետ՝ ուղղված համագործակցության խորացմանն ու երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը:

[24] News.am. «Չինական կողմը հետաքրքրվածություն է հայտնել ՀՀ-ում ցեմենտի գործարանի բացման և տրակտորների արտադրություն հիմնելու հարցում». հոկտեմբեր 19, 2023, https://shorturl.at/tYLvT
[25] Sputniknews. «Չինական ընկերությունների հետ քննարկվել է ՀՀ–ում էլեկտրամոբիլներ արտադրելու հարցը. նախարար», նոյեմբեր 03, 2023, https://is.gd/068hQ6
[26] Sputniknews. «Ինչն է հետաքրքրում չինացի ներդրողներին Հայաստանում. պարզաբանում է դիվանագետը», հուլիս 18, 2025, https://is.gd/pCnASM

Գծապատկեր 12. Չինաստանից Հայաստան ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքը 2019-2024 թթ-ին



Աղբյուր՝ Արմստրատ
Նշում՝ ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածի, տնային տնտեսություններին և տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների ներդրումներ

Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասը երկար ժամանակ Չինաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթ ուղղություններից չի եղել: Այնուամենայնիվ, վերջին տարիների զարգացումները վկայում են **Պեկինի դիրքորոշման որոշակի փոփոխության մասին**: Չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը, Արցախում ու Ուկրաինայում պատերազմները էականորեն մեծացրել են Չինաստանի հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ: Չինաստանը ոչ միայն ավելացրել է ներդրումները տրածաշրջանում, այլև ակտիվորեն զարգացնում է մշակութային և կրթական համագործակցությունը՝ նպատակ ունենալով ամրապնդել երկկողմ կապերը: Ներդրումների տեսանկյունից՝ Ադրբեջանում ու Վրաստանում չինական ներգրավածությունն տնտեսության մեջ արդեն նկատելի է, սակայն Հայաստանն այս մասով դեռ հետ է մնում:[27][28] Հայաստանում Չինաստանը ավելի ակտիվորեն կիրառում է «փափուկ ուժի» քաղաքականության գործիքներ՝ ֆինանսավորելով և կառուցելով մշակութային, կրթական կենտրոններ, խթանելով մարդասիրական նախաձեռնություններ:

[27] Daniel Shapiro. 'US Should Keep an Eye on Rising Chinese Investment in the South Caucasus'. Հոկտեմբերի 01, 2020. https://is.gd/WoytOJ
[28] Yunis Sharifli. 'Strategic Recalibration: Azerbaijan's Growing Partnership with China amid Global Shifts'. Դեկտեմբերի 08, 2024. https://is.gd/2gTj5L

Մասնավորապես՝ 2016-2018թթ-ին Չինաստանի կառավարությունը ավելի քան **12 միլիոն ԱՄՆ դոլար է ներդրել Երևանում հայ-չինական բարեկամության դպրոց կառուցելու համար**: Դպրոցը հարյուրավոր հայ աշակերտների հնարավորություն է տալիս սովորել չինարեն՝ ստանդարտ միջնակարգ կրթական ծրագրին զուգահեռ: Դպրոցը, որը նախատեսված էր մոտ 400 աշակերտի համար, այսօր ընդունում է շուրջ 700 աշակերտի՝ ապահովելով չինարեն լեզվի խորացված ուսուցում: Իսկ 2024թ-ի սեպտեմբերին Չինաստանի ֆինանսավորմամբ սկսվել է **Հայաստանի Հանրային հեռուստատեսության համար նոր հեռարձակման ստուդիայի շինարարությունը**: Այս ծրագրի համար Չինաստանը կտրամադրի ավելի քան 10 միլիարդ դրամ (մոտ 26 միլիոն ԱՄՆ դոլար) աջակցություն, որի միջոցով կառուցվող տաղավարը կդառնա հայկական հեռուստատեսության նոր արտադրական ենթակառուցվածքը Հայաստանի անկախությունից ի վեր, որի տարածքում կգործի 1,000 քառակուսի մետր մակերեսով ստուդիա:

2024թ-ին Հայաստանը անդամակցել է Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկին (ԵՆԱԲ), որի հիմնադիր անդամն ու խոշորագույն բաժնետերը Չինաստանն է[29]: Այս անդամակցությունը կարող է թույլ տալ Հայաստանին մասնակցել տարածաշրջանային ներդրումային նախագծերին և գուցե ներգրավել Չինաստանի կողմից ֆինանսավորվող ներդրումներ ենթակառուցվածքային նախաձեռնությունների համար: ԵՆԱԲ-ին անդամակցությունը կարևոր զարգացում է երկու երկրների հարաբերություններում. դրանով հիմք է ստեղծվել Հայաստանում չինական ներդրումների ավելացման համար: Հայաստանը միացել է բանկին՝ 374 բաժնեմասի բաժանորդագրությամբ, որոնցից յուրաքանչյուրի արժեքը 100 հազար ԱՄՆ դոլար է, որի 20%-ը վճարվել է, իսկ մնացածը՝ ըստ պահանջի:

Հայաստանի տնտեսության մեջ Չինաստանի ներգրավվածությունը դրսևորվում է նաև վերջին տասնամյակում մի քանի խոշոր ենթակառուցվածքային ծրագրերում չինացի կապալառուների աճող մասնակցությամբ, այդ թվում՝ ռազմավարական նշանակություն ունեցող Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի, Շիրակի մարզում Կապսի ջրամբարի, ինչպես նաև Հայաստանում առաջին խոշոր արդյունաբերական արևային էլեկտրակայանի կառուցման աշխատանքներում:

Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի կառուցումը (2016-2025)

[29] ՀՀ ԱԺ. 'Membership in Asian Infrastructure Investment Bank to enable RA to participate in major regional investment projects'. Հունիսի 11, 2024. https://is.gd/vAzD5a

Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքը ռազմավարական նշանակություն ունեցող մայրուղի է, որի ընդհանուր երկարությունը կազմում է 461 կմ: Նախագիծը նպատակ ունի բարելավել Հայաստանի հյուսիսային և հարավային հատվածների միջև կապը՝ ապահովելով մարդկանց և բեռների տեղափոխման ավելի արդյունավետ պայմաններ: Նախագիծը ֆինանսավորվում է բազմափուլ ֆինանսավորմամբ՝ բաժանված հինգ տրանշերի, որոնցից յուրաքանչյուրն իրականացվում է առանձին վարկային համաձայնագրերի շրջանակում:

Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի երրորդ տրանշի՝ Թալին-Գյումրի 41.7 կմ երկարությամբ հատվածի շինարարությունը ֆինանսավորվել է Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի կողմից տրամադրված վարկերի և դրամաշնորհների միջոցով՝ ընդհանուր 172 միլիոն ԱՄՆ դոլարի չափով[30]: Ճանապարհի վերականգնումը սկսվել է 2016թ-ին[31] և ավարտվել 2025 թ-ին: Աշխատանքները իրականացրել են չինական Sinohydro Corporation Ltd ընկերության և դրա ենթակապալառու S&A Mining LLC ընկերության կողմից[32]: Sinohydro-ն չինական պետական խոշոր շինարարական ձեռնարկություն է և Չինաստանի էներգետիկ շինարարության կորպորացիայի (POWERCHINA) դուստր ձեռնարկություն: Ընկերությունը մատուցում է ծառայությունների լայն շրջանակ, իրականացրել է նախագծեր Ասիայում, Աֆրիկայում և այլ տարածաշրջաններում:

Կապսի ջրամբարի կառուցումը (2023թ-ից)

Կապսի ջրամբարի կառուցումը, որը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, տարածաշրջանի համար կարևորագույն ենթակառուցվածքային նախագիծ է: Ծրագրի նախնական հաշվարկով ջրամբարը պետք է ունենա 25, ապագա ընդլայնումից հետո՝ 60 միլիոն խորանարդ մետր տարողություն[33]: Շուրջ 93.8 միլիոն եվրո արժողությամբ նախագիծն իրականացնում է չինական Shanxi Construction Investment Group Co ընկերությունը, որը Չինաստանի Շանսի նահանգի ամենամեծ պետական ներդրումային և շինարարական ընկերությունն է[34]:

---

[30] «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ, «Տրանշ 3. Թալին-Լանջիկ, Լանջիկ-Գյումրի», մուտք հունիսի 24, 2025, https://shorturl.at/NNcVF

[31] Շիրակի մարզպետի աշխատակազմ, 'The groundbreaking ceremony for the North-South Corridor Investment Program took place' [in Armenian]. Հունիսի 17, 2016. https://is.gd/cClrvF

[32] ADB. 'Environmental Monitoring Program: Armenia: North–South Road Corridor Investment Program - Tranche 3'. Ապրիլ 2023. https://is.gd/KIbNdr

[33] ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, «Տեղի է ունեցել Կապսի ջրամբարի հիմնարկեքը», մայիսի 18, 2023. https://www.mtad.am/news/1431

[34] Taiyuan Municipal People's Government website. https://is.gd/ropfrb

Ավարտից հետո 25 միլիոն խորանարդ մետր ծավալով ջրամբարը կապահովի 17,000 հեկտար հողատարածքի ոռոգումը և 2,280 հեկտարը մեխանիկական ոռոգումից կանցնի ինքնահոս ոռոգման, ինչը կհանգեցնի տարեկան 1.3 միլիոն կՎտ/ժ էներգիայի խնայողության: Մինչև 60 միլիոն խորանարդ մետր ծավալով ընդլայնվելուց հետո ջրամբարը հնարավորություն կտա ոռոգել ևս 920 հեկտար և փոխարինել մեխանիկական ոռոգումը մոտ 6,600 հեկտարով՝ տարեկան խնայելով 11 միլիոն կՎտ/ժ էլեկտրաէներգիա:

Մասրիկ-1 արևային էլեկտրակայանի կառուցումը (2023-2025)

Մասրիկ-1-ը Հայաստանի առաջին խոշոր արդյունաբերական արևային էլեկտրակայանն է: Այն շահագործման է հանձնվել 2025թ-ին: Նախագիծը պետական-մասնավոր գործընկերության արդյունք է և իրականացվել է հոլանդական Fotowatio Renewable Ventures B.V ընկերության կողմից՝ չինական կապալառու China Machinery Engineering Corporation ընկերության հետ համագործակցությամբ, որը պետական սեփականություն հանդիսացող Sinomach ձեռնարկության դուստր ձեռնարկություն է: Նախագծի իրականացնողը ընտրվել էր 2018թ-ին, սակայն շինարարությունը տարիներ շարունակ հետաձգվել էր հայ-ադրբեջանական ռազմական հակամարտության և ՔՈՎԻԴ-19 համավարակի պատճառով և սկսվել է միայն 2023թ-ի նոյեմբերին:[35][36] Նախագծի համար ֆոտովոլտային մոդուլների մատակարարը նույնպես չինական Jinko Solar ընկերությունն էր[37]: Մասրիկ-1-ը առաջին արդյունաբերական մասշտաբի արևային էլեկտրակայանը Հայաստանում, ինչպես նաև Կովկասում: Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանն ունի 55 ՄՎտ հզորություն և գտնվում է Գեղարքունիքի մարզի Մասրիկ համայնքում: Այն կարևոր դեր ունի ոչ միայն Հայաստանում վերականգնվող էներգիայի զարգացման, այլև երկրի էներգետիկ անվտանգության ապահովման ուղղությամբ:

Չինական ընկերությունները ոչ միայն ներգրավված են վերոնշյալ ենթակառուցվածքային ծրագրերում, այլև վերջին տարիներին արագ տեմպով մուտք են գործում հայկական շուկա: Հայաստանում մասնագիտացված խանութներ ունեն

[35] Արմենպրես, «Մասրիկ-1»-ի մրցույթը նոր և հեռանկարային փուլ է բացում դեպի անկախ էներգետիկ համակարգ. վարչապետ Կարապետյան, ապրիլի 04, 2018 https://shorturl.at/TkeZO

[36] Shtigen Energy Systems, «Ինչպե՞ս է կառուցվում Հայաստանի ամենախոշոր արևային կայանը», հուլիսի 26, 2024. https://shorturl.at/8e328

[37] PowerTechnology. “Power plant profile: Masrik 1 Solar PV Park, Armenia”. Թարմացված է հոկտեմբերի 21-ին, 2024. https://is.gd/PHZdDM

Xiaomi-ն, Haier-ը, Jetour-ը, վերջերս նաև Hongqi էլեկտրոմոբիլները:[38][39] Սակայն ամենից նշանակալին մնում է **Huawei-ի մուտքը**, որը թեպետ պաշտոնապես ներկայանում է որպես մասնավոր ընկերություն, սակայն շատերի կողմից ընդունվում է որպես Չինաստանի կոմունիստական կուսակցության կոմերցիոն կցորդ:[40] Huawei-ն իր ներկայացուցչությունը Հայաստանում հիմնադրել է 2010թ-ին, իսկ առաջին խանութը բացել է Երևանում 2014-ին[41]: Ներկայում Huawei-ը Հայաստանյան 1,000 խոշոր հարկատուներից մեկն է: Իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրի շրջանակներում՝ ընկերությունը 2021թ-ին նախաձեռնել է «Սերմեր ապագայի համար» ծրագիրը՝ նպատակ ունենալով աջակցել ուսանողներին՝ ուսումնասիրելու նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, զարգացնելու առաջնորդական հմտություններ և ծանոթանալու չինական մշակույթին: Ծրագիրը հավանության է արժանացել Հայաստանում ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպանի կողմից, ով մասնակցել և ելույթ է ունեցել բացման արարողությանը: 2017թ-ին Huawei-ն ստորագրել է փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ՝ **«խելացի քաղաքի»** նախագծի իրականացման համար: Նույն թվականին վարչապետի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ նախագծի պիլոտային փուլն իրագործելու համար: Խմբում ընդգրկված էին տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների փոխնախարարը, ոստիկանության պետի տեղակալը և Երևանի քաղաքապետի տեղակալը[42]: Սակայն Հայաստանի քաղաքական միջավայրում տեղի ունեցած փոփոխությունների, ՔՈՎԻԴ-19-ի և Արցախյան պատերազմի հետևանքով ծրագիրը դադարեցվել է: 2023թ-ին, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի Չինաստան պաշտոնական այցի ընթացքում, քննարկումներ են տեղի ունեցել Huawei-ի ներկայացուցիչների հետ՝ Հայաստանում խելացի տեխնոլոգիաների ներդրման և 5G ցանցի զարգացման ուղղությամբ:[43] Huawei-ի խելացի քաղաքի տեխնոլոգիական լուծումներն օգնում են բացահայտել,

---

[38] Tert.am. «Ջիգզագ և Haier ընկերությունների գործակցության շնորհիվ՝ Հայաստանում բացվեց Haier-ի առաջին բրենդ շոփը», սեպտեմբերի 05, 2024. https://is.gd/1V7Nbk

[39] Արմենպրես, «Չինաստանի ավտոարտադրության խորհրդանիշը Հայաստանում է. E-auto-ն՝ Hongqi էլեկտրամոբիլների պաշտոնական ներկայացուցիչ», ապրիլի 29, 2025. https://shorturl.at/XlyLw

[40] Noah Berman, Lindsay Maizland, and Andrew Chatzky. 'Is China's Huawei a Threat to U.S. National Security?'. Փետրվարի 8, 2023. https://is.gd/4NPB8o

[41] ArkaTelecom. 'Huawei opens first store in Armenian capital city'. June 30, 2014. https://is.gd/FphLZn

[42] E-gov.am. Վարչապետի որոշում, դեկտեմբերի 13, 2017, 1464 - Ա. https://www.e-gov.am/decrees/item/17970/

[43] ArkaTelecom. 'Kerobyan discussed with Huawei Technologies representatives implementation of smart technologies in Armenia's economy'. Հոկտեմբերի 23, 2023. https://is.gd/Loq0k7

վերահսկել և հետևել մարդկանց, ապրանքների և ծառայությունների տեղաշարժը: Ծրագիրը պահանջում է հազարավոր անվտանգության տեսախցիկների տեղադրում հասարակական վայրերում, որոնք հաճախ օգտագործում են դեմքի ճանաչման տեխնոլոգիա՝ մարդկանց և համարանիշները նույնականացնելու համար: Թեև այս խելացի լուծումները ներկայացվում են որպես կապի և արդյունավետության բարձրացման առաջատար միջոցներ, որոշ մասնագետներ կարծիք են հայտնում, որ դրանք կարող են պարունակել մի շարք ռիսկեր ժողովրդավարության համար, եթե դրանց իրականացումը չհամապատասխանի թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներին:[44] Բացի այդ, Huawei-ի արտադրանքը մտահոգություններ է առաջացրել այն վերաբերյալ, որ Չինաստանը «արտահանում է ավտորիտարիզմ»:[45] Չնայած ներկայումս կոնկրետ քայլեր չեն ձեռնարկվում Երևանում «խելացի քաղաք» նախագիծն իրականացնելու ուղղությամբ, Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոխնախարարը հանդիպումներ է ունեցել Huawei-ի ներկայացուցիչների հետ՝ համագործակցության խորացման և դրա հնարավոր ուղղությունների քննարկման նպատակով, իսկ «խելացի քաղաքի» նախաձեռնությունը մնում է հեռանկարային նախագծերից մեկը[46]:

Հայ-չինական տնտեսական համագործակցության կարևոր օրինակներից մեկն է **Շանսի-Նաիրիտ** համատեղ ձեռնարկությունը: 2003թ-ին Հայաստանը և Չինաստանը ստորագրել են միջպետական համաձայնագիր քլորոպրենային կաուչուկի արտադրությամբ զբաղվող Շանսի-Նաիրիտ համատեղ ձեռնարկության հիմնադրման համար: Ձեռնարկությունը ստեղծվել է երկու պետական ընկերությունների կողմից՝ չինական Shanxi Synthetic Rubber Group JSC-ի և հայկական Նաիրիտ ՓԲԸ-ի: Հայկական Նաիրիտը խորհրդային տարիներին եղել է սինթետիկ կաուչուկի ամենախոշոր արտադրողը ամբողջ ԽՍՀՄ-ում: Սակայն 1989թ-ին՝ բնապահպանական շարժման ճնշման տակ, գործարանը դադարեցրել է գործունեությունը և հետագա տարիներին հայտնվել լուրջ ֆինանսական խնդիրների մեջ: Շանսի-Նաիրիտ նախաձեռնությունը միավորել է հայկական կողմի տեխնոլոգիական փորձն ու արտադրական կարողությունները չինական

[44] B. Kerley, R. Kasenally, B. Simão and B. Santos. 'Smart Cities and Democratic Vulnerabilities'. Դեկտեմբերի 2022. https://is.gd/Vpg69s

[45] Jonathan E. Hillman and Maesea McCalpin. Center for Strategic and International Studies. 'Watching Huawei's "Safe Cities"'. Նոկեմբերի 4, 2019. https://is.gd/7pAtVh

[46] Հետք, «ԲՏԱ փոխնախարն ընդունել է «Huawei Technologies Armenia»-ի գլխավոր տնօրեն Ջըն Սիոսյուին«, հոկտեմբերի 16, 2024. https://is.gd/GBwNqP

ներդրումային ռեսուրսների հետ: Շինարարական աշխատանքները ավարտվել են 2009թ-ին, իսկ գործարանը պաշտոնապես բացվել է 2010թ-ին՝ Չինաստանի Շանսի նահանգում: Բաժնեմասերի բաշխումը սահմանվել է 60%՝ չինական, և 40%՝ հայկական կողմի միջև:[47]

Ամփոփելով, կարող ենք նշել, որ թեպետ աշխարհագրական դիրքի, շուկայի փոքր չափերի ու ցածր իրազեկվածության պատճառով չինական ներդրումների կշիռը Հայաստանում տակավին աննշան է, սակայն նախորդ տարիներին Հայաստանի նկատմամբ աճող հետաքրքրություններն ու համագործակցության ուղղությամբ ձեռնարկվող քայլերը թույլ են տալիս ապագայում լուրջ առաջընթաց սպասել:

[47] Shanxi-Nairit Synthetic Rubber Co, Ltd. Website: About us. Մուտք՝ Հունիսի 24, 2025. https://is.gd/hQ3PQS

Գլուխ 3. Չինաստանի և Հայաստանի միջև զբոսաշրջության միտումները

Վերջին տարիներին նկատվում է Հայաստանի և Չինաստանի միջև զբոսաշրջային հոսքերի նկատելի աճ: Երկու ուղղություններով էլ զբոսաշրջային այցելությունների թվի ավելացումը պայմանավորված է՝ երկկողմ համագործակցության խորացումով, մշակութային ծրագրերի ակտիվացմամբ, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանն ուղղված՝ երկու երկրների կողմից իրականացվող նպատակային քայլերով:

Մինչև ՔՈՎԻԴ-19 համավարակը՝ 2019թ-ին, Հայաստան այցելած չինացի զբոսաշրջիկների թիվը կազմել է մոտ 14 հազար: Համավարակի պատճառով՝ 2020-2021թթ-ին, զբոսաշրջային հոսքերը գրեթե կանգ առան, սակայն վերջին երեք տարիների ընթացքում արձանագրվել է զգալի աճ: 2022-2024թթ-ին Չինաստանից Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվը աճել է շուրջ 6 անգամ, հասնելով մոտ 33 հազարի:

Նշանակալի է այն հանգամանքը, որ աճում է ոչ միայն Չինաստանից Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը, այլև դրանց մասնաբաժինը Հայաստան այցելած զբոսաշրջիկների մեջ: Եթե 2022թ-ին Չինաստանից այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել էին ընդամենը 0.3%, ապա 2024թ-ին՝ դրանց մասնաբաժինը հասել է 1.5%-ի:

Գծապատկեր 13. Չինաստանից Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը 2020-2024 թթ-ին



Աղբյուր՝ Արմստրատ

Հայաստան այցելած չինացի զբոսաշրջիկների թվաքանակի արագ աճը փոխել է երկրի դիրքը Հայաստանի զբոսաշրջային քարտեզում: Եթե 2022թ-ին Չինաստանը 21-րդ տեղում էր Հայաստան այցելած զբոսաշրջիկների թվով, ապա 2023թ-ին երկիրը արդեն հայտնվել էր առաջին տասնյակի մեջ, իսկ 2024թ-ին՝ 7-րդն էր:

Գծապատկեր 14. Հայաստան այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը 2024 թ-ին



Աղբյուր՝ Արմստատ
*Նշում՝ * Զբոսաշրջիկների թվի աշխարհագրական բաշխածությունը ներկայացնում է ըստ ժամանած զբոսաշրջիկների քաղաքացիության: Հայաստանի ներքո ներկայացված են այն այցելուները, ովքեր ունեն ՀՀ քաղաքացիություն, բնակվում են արտասահմանում և Հայաստան են ժամանել զբոսաշրջության նպատակով:*

Զբոսաշրջիկների թվաքանակի այս արագ աճը պատահական չէ, դրան նպաստել են՝ պետական քաղաքականության փոփոխությունները, մշակութային ծրագրերի ակտիվացումը և զբոսաշրջության խթանման ուղղությամբ իրականացված նպատակային քայլերը:

2015թ-ին Պեկինում ՀՀ և ՉԺՀ կառավարությունների միջև ստորագրվեց համագործակցության համաձայնագիր զբոսաշրջության ոլորտում[48]: Համաձայնագրի համաձայն կողմերը պարտավորվում են՝

[48] ARLIS. «Համաձայնագիր ՀՀ Կառավարության և ՉԺՀ Կառավարության միջև զբոսաաշրջության բնագավառում համագործակցության մասին», դեկտեմբերի 12, 2015. https://www.arlis.am/hy/acts/103957

1. համագործակցել երկու երկրների միջև զբոսաշրջության (այդ թվում՝ կազմակերպված զբոսաշրջության) զարգացման ուղղությամբ,
2. աջակցել իրենց պետություններում զբոսաշրջության բնագավառի մարմինների, զբոսաշրջային օպերատորների, այլ կազմակերպությունների համագործակցությանը՝ երկու երկրների միջև զբոսաշրջային հոսքերի ավելացման նպատակով,
3. իրենց երկրների օրենսդրությանը համապատասխան, ձգտել դյուրացնել երկու երկրների միջև զբոսաշրջության նպատակով ժամանումների ընթացակարգերը,
4. զարգացնել փոխադարձ համագործակցությունը հետևյալ բնագավառներում՝ կադրերի մասնագիտական դասընթացներ և վերապատրաստում, զբոսաշրջության բնագավառի մասնագետների, փորձագետների և լրագրողների փոխանակում,
5. զբոսաշրջության ոլորտը կարգավորող իրենց պետական իրավասու մարմինների միջոցով աջակցել զբոսաշրջության ոլորտում ներդրողների, տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաև զբոսաշրջության բնագավառի հասարակական և ոչ առևտրային այլ կազմակերպությունների միջև համագործակցության հաստատմանը և զարգացմանը,
6. խրախուսել փոխադարձ մասնակցությունը երկու երկրներում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին, տոնավաճառներին, համաժողովներին, սեմինարներին և այլ միջազգային զբոսաշրջային միջոցառումներին:

2019թ-ին Հայաստան-Չինաստան համագործակցության շրջանակում երկու երկրները ձեռնարկեցին ամենակարևոր քայլերից մեկը՝ փոխադարձաբար վերացնելով վիզայի պահանջը[49]. Համաձայն «**ազատ վիզայի ռեժիմի**»՝ թե՛ Հայաստանի, թե՛ Չինաստանի քաղաքացիներն ազատված են մուտքի արտոնագրի պահանջից՝ մինչև 90 օր ժամկետով մուտքի դեպքում: Այս քայլը ոչ միայն դյուրացրել է ճանապարհորդությունները, այլև քաղաքական վստահության և գործընկերային հարաբերությունների բարձր մակարդակի դրսևորում էր: Վիզային ռեժիմի չեղարկումը Հայաստանը դարձրել է ավելի մատչելի և գրավիչ ուղղություն չինացի

[49] ARLIS. «Համաձայնագիր ՀՀ Կառավարության և ՉԺՀ Կառավարության միջև սովորական անձնագիր կրող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի փոխադարձաբար վերացման մասին», դեկտեմբերի 10, 2019: https://www.arlis.am/hy/acts/137530

զբոսաշրջիկների համար՝ միաժամանակ խթանելով մշակութային կապերի զարգացումը:

Վիզայի պահանջի վերացումից բացի երկու երկրների միջև քաղաքացիների տեղաշարժը դյուրացնելու կարևորագույն նախաձեռնություններից մեկը դարձավ ուղիղ ավիահաղորդակցության հաստատումը: 2024թ-ի սեպտեմբերի 3-ին China Southern Airlines-ը մեկնարկեց Ուրումչի–Երևան–Ուրումչի երթուղով կանոնավոր չվերթներ, որոնք գործում են շաբաթական երկու անգամ՝ երեքշաբթի և շաբաթ օրերին, իսկ մեկ ուղղությամբ թռիչքի տևողությունը կազմում է մոտ 4-5[50]: Ուրումչիից հնարավոր է նույն օրը կապ հաստատել Չինաստանի խոշոր քաղաքների՝ Պեկինի, Շանհայի, Գուանչժոուի և ևս 41 ուղղությունների հետ: Այս զարգացումները անխոս զգալիորեն նվազեցրել են երկու երկրների միջև ճամփորդելու համար խոչընդոտները ու ծախսերը, բայց Հայաստանի՝ որպես զբոսաշրջային ուղղության ճանաչելիության բարձրացմանը մեծապես նպաստել են Հայաստանին նվիրված կրթամշակութային նախաձեռնությունների աճը Չինաստանում:

Մշակութային նախաձեռնությունները կարևոր դեր են խաղացել Չինաստանի և Հայաստանի միջև զբոսաշրջության զարգացման խթանման գործում: Վերջին տարիներին երկու երկրները ակտիվորեն կազմակերպում էին մշակութային միջոցառումներ՝ ներկայացնելով իրենց ժառանգությունն ու ավանդույթները: Այս մշակութային միջոցառումները ոչ միայն խորացնում են ժողովուրդների փոխադարձ ըմբռնումը, այլև ձևավորում են հետաքրքրություն միմյանց մշակույթի և պատմության նկատմամբ՝ խթանելով զբոսաշրջային շարժը: Դրանք՝ ի լրումն դիվանագիտական դաշտում ձեռնարկվող քայլերին և նպատակային զբոսաշրջային միջոցառումների իրականացմանը, օգնել են ժողովուրդների միջև կապերի ամրապնդմանը: 024թ-ին Չինաստանում կայացել են այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են հայկական արվեստի և գինու փառատոնը, Երևան քաղաքի պատմության թանգարանի ցուցանմուշներով Հայաստանին նվիրված ցուցահանդեսներ են կազմակերպվել Չինաստանի չորս տարբեր քաղաքներում՝ Ֆուցզիանում, Նինբոնում, Սիանում և, Գուանչժոում:[51][52] Բացի այդ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը

[50] Զվարթնոց, «Մեկնարկել են China Southern Airlines ավիաընկերության Ուրումչի-Երևան- Ուրումչի երթուղով չվերթերը», սեպտեմբերի 3, 2024: https://shorturl.at/CTBB5
[51] China Daily. '1st Armenia Art and Wine Festival kicks off at Waigaoqiao Global Hub in Shanghai'. Հուլիսի 2, 2024. https://is.gd/cR5DgW
[52] Երևանի պատմության թանգարան, 2024թ-ի հաշվետվություն, https://shorturl.at/ZuvHJ

համերգային շրջագայությամբ հանդես է եկել Չինաստանում, իսկ 2023թ-ից մեկնարկել են «Հայկական մշակույթի օրերը»:[53] Առաջին անգամ իր պատմության մեջ Արամ Խաչատրյանի անվան միջազգային երաժշտական մրցույթը նույնպես անցկացվել է Հայաստանից դուրս՝ Չինաստանում՝ Չինաստանի կառավարության աջակցությամբ[54]:

Վերջին տարիներին Հայաստանում նկատվում է հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավվածություն Հայաստան–Չինաստան համագործակցության ամրապնդման գործում: Հայ-չինական բարեկամությանն ու երկկողմ կապերի զարգացմանը նվիրված կազմակերպությունների թիվն աճել է, իսկ դրանց գործունեությունը դարձել է առավել նպատակային: Այս կազմակերպությունները կարևոր դեր են խաղում մշակութային փոխանակման, կրթական գործընկերության և ժողովուրդների միջև կապերի խորացման գործընթացում: Դրանք ոչ միայն կազմակերպում են համատեղ մշակութային միջոցառումներ, այլև աջակցում են հայկական ընկերությունների մասնակցությանը Չինաստանում անցկացվող միջազգային ցուցահանդեսներին և նախաձեռնում այլ միջոցառումներ, որոնք նպաստում են Հայաստանի և Չինաստանի միջև գործարար, մշակութային և կրթական կապերի ամրապնդմանը:

Այսպիսով, վերջին տարիներին կատարված աշխատանքի շնորհիվ Հայաստանը սկսել է նախընտրելի ուղղություն դառնալ չինացի զբոսաշրջիկների քարտեզում, իսկ Չինաստանը ներառվել է Հայաստանի ներգնա զբոսաշրջության առաջատար տասնյակում, ինչը վկայում Չինաստանի՝ Հայաստանի նկատմամբ աճող հետաքրքրության մասին:

[53] China Global Pulse. Armenian Culture Days 2025: Music, Dance & Heritage. https://is.gd/tguXeq

[54] Արմենպրես: «Անցյալ տարի Չինաստանի և Հայաստանի երկկողմ հարաբերությունները զարգացել են նորովի. ՀՀ-ում ՉԺՀ դեսպան», փետրվար 2, 2024: https://is.gd/iUdMJS

Գլուխ 4. Չինաստանի արտաքին օգնությունը Հայաստանին

4.1 Չինաստանի արտաքին օգնության էվոլյուցիան

Վերջին տասնամյակների ընթացքում **Չինաստանը դարձել է միջազգային զարգացման համագործակցության առանցքային դերակատարներից մեկը**: Ավելին՝ վերջին 75 տարիների ընթացքում նրա արտաքին օգնության քաղաքականությունը զգալի փոփոխությունների է ենթարկվել՝ գաղափարական և քաղաքական շարժառիթներով պայմանավորված մոտեցումից աստիճանաբար անցնելով տնտեսական և ռազմավարական շահերով առաջնորդվող ուղղության:[55] Չինաստանի արտաքին օգնության աշխարհագրական բաշխվածությունն ևս ժամանակի ընթացքում փոխվել. 2009թ-ից ի վեր Եվրոպայի մասնաբաժինը զգալիորեն կրճատվել է, փոխարենը, Ասիան և Աֆրիկան շարունակում են մնալ չինական օգնության հիմնական շահառուները, ինչը արտացոլում է Պեկինի ռազմավարական առաջնահերթությունները և զարգացման նպատակները այդ տարածաշրջաններում: Վերջին տարիներին նկատվում է Չինաստանի արտաքին օգնության ռազմավարության **նոր միտում՝ Հարավային Կովկասում իր ներկայությունը ամրապնդելու ուղղությամբ**: Ավանդաբար Պեկինը տարածաշրջանը դիտարկել է Ռուսաստանի ազդեցության գոտի և խուսափել է ակտիվ քայլերից: Սակայն այս մոտեցումը աստիճանաբար փոխվել է. Չինաստանը սկսել է ռազմավարական համաձայնագրեր կնքել տարածաշրջանի երկրների հետ: Այդ գործընթացում կարևոր շրջադարձային պահ էր Պեկինի և Թբիլիսիի միջև 2023թ-ի հուլիսին ստորագրված ռազմավարական գործընկերության համաձայնագիրը, որը շատերի կողմից մեկնաբանվում է որպես Չինաստանի պատրաստակամության նշան՝ առավել ակտիվ դեր ստանձնելու Հարավային Կովկասում:[56]

Այս փոփոխությունները և խթանների վերաձևավորումը հանգեցրել են նաև Չինաստանի արտաքին օգնության կառուցվածքային վերափոխություններին: Ավանդաբար, Չինաստանը իր օժանդակությունը տրամադրել է **երեք հիմնական ձևաչափով**՝ դրամաշնորհներ, անտոկոս վարկեր և արտոնյալ վարկեր՝

[55] SIRPI. “China’s Evolving Approach to Foreign Aid. Policy Paper”. Մայիսի 2022. Մուտք՝ մարտի 14, 2025. https://is.gd/ON5qdR

[56] Emil Avdaliani. “What’s Behind China’s Strategic Partnership With Georgia?”. Օգոստոս 17, 2023. Մուտք՝ Հունիսի 13, 2025. https://is.gd/zMjAAj

- **Արտոնյալ վարկերը** հիմնականում ուղղվում էին արդյունաբերական նախագծերի, ինչպես նաև տնտեսական և սոցիալական նշանակության խոշոր և միջին ենթակառուցվածքային նախաձեռնությունների ֆինանսավորմանը, մեքենա-սարքավորումների և էլեկտրոնային տեխնիկայի մատակարարմանը,
- **Դրամաշնորհները** հիմնականում օգտագործվում էին փոքր և միջին սոցիալական բարեկեցության ծրագրերի, մարդկային ռեսուրսների զարգացման (վերապատրաստում, ուսուցում), տեխնիկական համագործակցության, նյութական օժանդակության և արտակարգ հումանիտար օգնության նպատակներով:
- **Անտոկոս վարկերը** հիմնականում տրամադրվում էին հանրային նշանակության շինությունների կառուցման և բնակչության կյանքի որակի բարելավմանը միտված ծրագրերի իրականացման համար:

2021թ-ին Չինաստանի կառավարությունը հրապարակել է իր վերջին պաշտոնական զեկույցը (white paper) միջազգային զարգացման համագործակցության վերաբերյալ, որտեղ ներկայացվում են երկրի արտաքին օգնության կառուցվածքային միտումները: Փաստաթղթի համաձայն՝ թեև արտոնյալ վարկերը շարունակում են մնալ արտաքին օգնության հիմնական ձևը, դրանց մասնաբաժինը, ինչպես նաև անտոկոս վարկերի մասնաբաժինը, 2010թ-ից ի նվազում էր: **Դրամաշնորհների մասնաբաժինը, ընդհակառակը, զգալիորեն աճել է**՝ 2010–2012թթ-ի 36.2%-ից հասնելով 47.3%-ի 2013–2018թթ-ի ընթացքում:[57][58] Այս միտումը նկատվում է նաև Չինաստանի կողմից Հայաստանին տրամադրվող օգնության կառուցվածքում, որտեղ օժանդակության գերակշիռ մասը տրամադրվում է դրամաշնորհների ձևով:

Աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, Չինաստանը իր արտաքին օգնությունը **հիմնականում իրականացնում է հետևյալ ձևաչափերով**՝ ամբողջական ծրագրերի իրականացում, ապրանքների մատակարարում, տեխնիկական համագործակցություն և մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրեր, բժշկական թիմերի և կամավորների գործուղում, արտակարգ հումանիտար օգնության տրամադրում և շահառու երկրների պարտքերի նվազեցում կամ զիջում:

[57] The State Council of the People's Republic of China. "China's Foreign Aid (2014)". Հուլիսի 2014. https://is.gd/dha3gy
[58] The State Council of the People's Republic of China. "Full text: China's International Development Cooperation in the New Era". Հունվարի 10, 2021. https://is.gd/izohUm

«Ամբողջական ծրագրի» (complete project) մոդելը Չինաստանի արտաքին օգնության ավանդական և կարևոր բաղադրիչներից մեկն է: Ժամանակի ընթացքում այն զգալիորեն ընդլայնվել է՝ ընդգրկելով ոչ միայն ենթակառուցվածքային և կապի նախագծեր, այլև հասարակական նշանակության շենքերի, գյուղատնտեսական և վերջին տարիներին՝ կլիմայի փոփոխությանն առնչվող նախաձեռնությունների իրականացում: 2013–2018թթ-ին Չինաստանը ամբողջ աշխարհում իրականացրել է 423 ամբողջական ծրագիր, որոնց թվում եղել են 86 դպրոցների կառուցման նախագծեր, այդ թվում՝ մեկ դպրոց Հայաստանում: Այս մոդելի շրջանակում Չինաստանը տրամադրում է ինչպես ֆինանսական, այնպես էլ տեխնիկական աջակցություն: Ժամանակի ընթացքում այս մոդելով իրականացվող ծրագրերի քանակը նվազել է. եթե 2010–2012թթ-ի ընթացքում իրականացվել է 580 ծրագիր, ապա 2013–2018թթ-ին՝ 423: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ այս մոդելը գնալով ավելի սերտորեն է ինտեգրվում «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը, այն, ամենայն հավանականությամբ, կմնա Չինաստանի միջազգային զարգացման համագործակցության առանցքային գործիքը:[59]

Վերջին տասնամյակների ընթացքում Չինաստանը մեծացրել է իր ուշադրությունը **մարդկային ռեսուրսների զարգացմանը և ժողովուրդների միջև կապերի ամրապնդմանը**՝ այն դիտարկելով որպես ազդեցության խորացման գործիք՝ թե՛ պետությունների, թե՛ անհատների մակարդակներում: Ընդհանուր առմամբ, Չինաստանի կրթական օժանդակությունն ու վերապատրաստման ծրագրերը, որոնք միասին ներկայացվում են որպես մարդկային ռեսուրսների զարգացման նախաձեռնություններ, արագորեն ընդլայնվել են: 2010–2012թթ-ին Չինաստանը վերապատրաստում է անցկացրել մոտ 50,000 անձի համար, իսկ հաջորդ վեց տարիների ընթացքում՝ 2013–2018թթ-ին, այդ ցուցանիշը հասել է շուրջ 200,000-ի: Այս միտումը նկատվում է նաև Հայաստանի դեպքում (տե՛ս Գլուխ 5. Չինաստանի ներկայությունն Հայաստանի կրթական համակարգում):

Չինաստանի կառավարության կողմից տրամադրված զարգացման ֆինանսավորման և արտաքին օգնության ճշգրիտ ծավալը գնահատելն բարդ է, քանի որ պաշտոնական վիճակագրությունը ամբողջությամբ չի հրապարակվում: Այնուամենայնիվ, վերջին պաշտոնական տվյալների համաձայն՝ 2013–2018թթ-ի ընթացքում Չինաստանի

[59] SIRPI. “China’s Evolving Approach to Foreign Aid. Policy Paper”. Մայիսի 2022.Մուտք՝ Մարտի 14, 2025. https://is.gd/ON5qdR

ընդհանուր արտաքին օգնությունը կազմել է 270.2 միլիարդ յուան, ինչը կազմում է շուրջ 42 միլիարդ ԱՄՆ դոլար:[60] Սա միջինում համարժեք է տարեկան մոտ 7 միլիարդ ԱՄՆ դոլարի, ներառյալ թե՛ առանձին երկրներին տրամադրված օգնությունը, թե՛ հատկացումները միջազգային կազմակերպություններին: Թեպետ համընդգրկուն տվյալները սահմանափակ են, Չինաստանի երկկողմ արտաքին օգնության ներկայիս ծավալը կարելի է մոտավոր գնահատել այս ուղղությամբ նրա երկու հիմնական կառույցների՝ Առևտրի նախարարության և Չինաստանի Միջազգային զարգացման համագործակցության գործակալության բյուջեների հիման վրա: Նրանց արտաքին օգնության բյուջեները միասին 2024 թ-ին կազմել են մոտ 2.85 միլիարդ ԱՄՆ դոլար: 2025թ-ին Միացյալ Նահանգների կողմից արտաքին օգնության ծավալի զգալի կրճատումից հետո առաջացել է կարևոր հարց՝ արդյոք Չինաստանը կօգտվի՞ այս հնարավորությունից իր ազդեցությունը մեծացնելու և առաջացած բացը լրացնելու համար: Թեև պատմականորեն Չինաստանի արտաքին օգնությունը կազմել է ԱՄՆ կողմից հատկացվող օգնության միայն մի փոքր մասնաբաժինը (օրինակ՝ ըստ գնահատականների 2013–2018թթ-ին այն կազմել է ԱՄՆ օգնության ընդամենը 14.6%-ը), հավանական է, որ Պեկինը կփորձի օգտվել Վաշինգտոնի հետքայլից՝ ամրապնդելով իր դիրքերը միջազգային օգնության դաշտում:[61] Հաշվի առնելով վերջին միտումները՝ այս զարգացումները հատկապես արդիական են Հարավային Կովկասում, որտեղ Չինաստանը դրսևորում է աճող հետաքրքրություն՝ զարգացման համագործակցության միջոցով տարածաշրջանում իր ներկայությունն ու ազդեցությունը խորացնելու ուղղությամբ: Այս տարածաշրջանում, որտեղ ավանդաբար ամուր դիրք ուներ ԱՄՆ-ն, Չինաստանը արդեն սկսել է խորացնել հարաբերությունները Վրաստանի և Ադրբեջանի հետ, իսկ Հայաստանում 2024թ-ի վերջին մեկնարկել է իր ամենախոշոր զարգացման նախագիծը:[62]

4.2 Չինաստանի մարդասիրական օգնությունը Հայաստանին

1992թ-ին դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր Չինաստանի կառավարությունը մշտապես արտաքին օգնություն է տրամադրել Հայաստանին՝ դրամաշնորհների և արտոնյալ վարկերի միջոցով:

---

[60] The State Council of the People's Republic of China. "Full text: China's International Development Cooperation in the New Era". Հունվարի 10, 2021. https://is.gd/izohUm

[61] Yun Sun. "Can China fill the void in foreign aid?". March 11, 2025. Մուտք՝ Հունիսի 13, 2025. https://is.gd/DZwQZa

[62] Robert M. Cutler. "China's strategic pivot paying off in South Caucasus". Մայիսի 16, 2025. Մուտք՝ Հունիսի 13, 2025. https://is.gd/nto5Zh

Արտոնյալ վարկերը Չինաստանի արտաքին օգնության ամենասխալ ընկալվող ձևերից մեկն են: Դրանք տրամադրվում են շուկայականից ցածր տոկոսադրույքներով, և թեև դրանք պաշտոնապես տրամադրում է Չինաստանի Արտահանման-Ներմուծման առևտրային բանկը, դրանց սպասարկումը (սուբսիդավորումը) իրականացվում է երկրի արտաքին օգնության բյուջեից տրամադրվող միջոցների հաշվին: Այս վարկերը տրամադրվում են յուանով: Դրանք բարենպաստ պայմաններով տրամադրվում են անմիջապես պետական հաստատություններին՝ սովորաբար 20 տարվա մարման ժամկետով, 5 տարվա արտոնյալ ժամանակահատվածով և 2% տոկոսադրույքով: Այս գործընթացը կազմակերպվում է հետևյալ կերպ. Ֆինանսների նախարարությունը հաշվարկում է արտոնյալ վարկի տոկոսադրույքի և Կենտրոնական բանկի հիմնական տոկոսադրույքի միջև տարբերությունը և հատուցում է այդ տարբերությունը Արտահանման-Ներմուծման բանկին՝ այսպիսով փոխհատուցելով արտոնյալ վարկի օգնության բաղադրիչը:

Հայաստանի դեպքում՝ ներկայումս կա մեկ **արտոնյալ վարկային ծրագիր**, որը տրամադրվել է **մաքսային համակարգի արդիականացումը և տեխնիկական վերազինումը** խթանելու նպատակով: **2015թ-ին** ՀՀ կառավարությունը և Չինաստանի Արտահանման-ներմուծման բանկը ստորագրել են արտոնյալ վարկի տրամադրման համաձայնագիր, որի շրջանակներում Չինաստանը Հայաստանին տրամադրել է վարկ՝ չինական Nuctech Company LLC ընկերությունից մաքսային զննման տեխնոլոգիաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար[63]: Մասնավորապես, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության և Nuctech Company LLC ընկերության միջև կնքված մատակարարման պայմանագրի՝ չինական կողմը պարտավորվել է մատակարարել Հայաստանի կառավարությանը մաքսային զննման համակարգեր և սարքավորումներ, այդ թվում՝ բեռնարկղերի և տրանսպորտային միջոցների շարժական սկաներներ, թեթև ավտոմեքենաների սկաներներ, ճառագայթային (X-ray) ուղեբեռի և մարմնի սկաներներ[64]: Վարկի չափը կազմում է 155.5 միլիոն յուան (մոտ 25.3 միլիոն ԱՄՆ դոլար)՝ 2% ֆիքսված տոկոսադրույքով, 20

[63] Իրտեկ, Հատված ՀՀ Կառավարության նիստի արձանագրություններից, մարտի 19, 2015, մուտք՝ մարտի 17, 2025: https://is.gd/f2RLPR

[64] Իրտեկ, Հատված ՀՀ Կառավարության նիստի արձանագրություններից, հունիսի 9, 2016, մուտք՝ մարտի 17, 2025: https://is.gd/FY3Dvv

տարվա ժամկետով, որոնցից 5 տարին՝ արտոնյալ պայմաններով[65,66,67]: 2024թ-ի դեկտեմբերի 21-ի դրությամբ, վարկի չմարված մնացորդը կազմել է մոտ 15 միլիոն ԱՄՆ դոլար:

Հայաստանին Չինաստանի արտաքին օգնության մեծ մասը տրամադրվում է **դրամաշնորհների տեսքով**՝ ապրանքների մատակարարման, տեխնիկական համագործակցության, մարդկային ռեսուրսների զարգացման նախաձեռնությունների, բժիշկների թիմերի և կամավորների գործուղման միջոցով: Տարիների ընթացքում Չինաստանը իրականացրել է մի շարք խոշոր ծրագրեր՝ որոնց մի մասը **համահունչ են եղել Հայաստանի զարգացման կարիքներին, իսկ մյուսները՝ դոնորի ռազմավարական շահերին**: Չնայած երկկողմ համագործակցության շարունակականությանը՝ վերջին տասնհինգ տարիների ընթացքում Չինաստանի օգնության ընդհանուր արժեքն ու մասնաբաժինը նվազել են, բացառությամբ առանձին տարիներին: Այնուամենայնիվ, **2024թ-ին Չինաստանը մեկնարկել է Հայաստանում իր ամենախոշոր օգնության ծրագրերից մեկը**՝ Հայաստանի Հանրային հեռուստատեսության նոր տաղավարի կառուցումը: Քանի որ Չինաստանը ձգտում է ընդլայնել իր ներկայությունը Հարավային Կովկասում, առաջիկա տարիներին Չինաստանի օգնությունը Հայաստանին կարող է աճել:

2024թ-ին Հայաստանը Չինաստանից ստացել է 3.2 միլիոն ԱՄՆ դոլարի արտաքին օգնություն, ինչը կազմել է **այդ տարվա ընդհանուր օգնության 4 %-ը**. սա նվազում է 2010թ-ի համեմատ, երբ Չինաստանի բաժինը կազմում էր 13 % կամ 6.5 միլիոն ԱՄՆ դոլար:

Վերջին 15 տարիների ընթացքում Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի արտաքին օգնության կառուցվածքում առավելագույնի է հասել **2012 թ-ին՝ կազմելով 32%, 2018-ին՝ 22% և 2011-ին՝ 20%:** Այդ տարիների աճը հիմնականում պայմանավորված է եղել տրանսպորտային միջոցների (օրինակ՝ շտապօգնության ավտոմեքենաների) նվիրատվությամբ: Չնայած Չինաստանի մասնակցությունը Հայաստանի արտաքին օգնությանը դոլարային արտահայտությամբ նվազել է,

---

[65] ՀՀ ՖՆ, Կառավարության արտաքին վարկեր և փոխառություններ -2020, մուտք՝ մարտի 16, 2025: https://is.gd/awOUq1

[66] Civilnet, "Չինաստանը Հայաստանին մոտ $25.3 մլն վարկ կտրամադրի՝ յուանով", մարտի 19, 2015, Մուտք մարտ 16, 2025: https://shorturl.at/WcmyU

[67] ՖՆ, Կառավարության արտաքին վարկեր և փոխառություններ – 2024, մուտք՝ մարտի 16, 2025: https://is.gd/Le9TW4

ծավալային առումով այն վերջին 15 տարիներին աճել է՝ վերջին հինգ տարիներին պահպանելով կայուն աճ միտում: 2024թ-ին Չինաստանը ապահովել է Հայաստանի ստացած արտաքին օգնության ընդհանուր ծավալի 22%-ը, մինչդեռ մինչքովիդյան 2019թ-ին այս ցուցանիշը կազմում էր 11%, իսկ 2010 թ-ին՝ ընդամենը 5%:

Գծապատկեր 15. Հայաստանին Չինաստանից տրամադրված արտաքին օգնությունը 2010-2024թթ-ին



Աղբյուր՝ Արմստրատ

Ինչպես երևում է Գծապատկեր 15-ից՝ օգնության զգալի աճը՝ 2011թ-ին (կրկնակի), 2012թ-ին (54%) և 2018թ-ին (3.5 անգամ), հիմնականում պայմանավորված էր տրանսպորտային միջոցների՝ մասնավորապես **շտապօգնության մեքենաների և ավտոբուսների նվիրատվության կտրուկ աճով**: 2011թ-ին Չինաստանը Հայաստանին նվիրաբերել է **88 շտապօգնության մեքենա**, որոնցից 35-ը տրամադրվել են Երևանին, իսկ մնացածը՝ մարզային բուժհաստատություններին:[68] Այս աջակցության ծրագիրը ավարտվեց 2012թ-ին, երբ Չինաստանը նվիրեց ևս **249 ավտոբուս,** որոնք ուղղվեցին մայրաքաղաքի հանրային տրանսպորտի բարելավմանը[69]: Քաղաքային տրանսպորտային համակարգի բարեփոխումը վերջին տասնամյակում Հայաստանի ազգային օրակարգի առանցքային ուղղություններից էր և այս նվիրատվությունը կարևոր քայլ հանդիսացավ հին միկրոավտոբուսային պարկի

[68] ՀՀ ԱԳՆ, տարեկան հաշվետվություն 2011, մուտք՝ մարտի 16, 2025: https://is.gd/nWBAcn
[69] ՀՀ ԱԳՆ, տարեկան հաշվետվություն 2012, մուտք՝ մարտի 16, 2025: https://is.gd/vnQuRO

նոր ավտոբուսներով փոխարինելու ուղղությամբ: Ինչ վերաբերում է 2018թ-ին օգնության աճին, ապա այդ տարի Չինաստանը Հայաստանին նվիրաբերել է ևս **200 շտապօգնության մեքենա**, որոնցից 65-ը՝ ռեանիմոբիլ:[70] Այս նվիրատվությունը Չինաստանից ստացված օգնության ընդհանուր արժեքը 2018թ-ին հասցրեց 19.6 միլիոն ԱՄՆ դոլարի: Նույն աջակցության ծրագրի շրջանակում իրականացվել են նաև մասնագիտական վերապատրաստումներ, որի արդյունքում վերապատրաստվել են շուրջ 350 բժիշկ, բուժքույր և վարորդ:[71]

Գծապատկեր 16. Չինաստանի կառավարության օգնությունը Հայաստանին 2010-2024 թթ-ին



Աղբյուր՝ Արմսպատ

Չինաստանը տարիների ընթացքում աջակցել է մի շարք ծրագրերի, որոնք ուղղված են եղել Հայաստանի հրատապ զարգացման կարիքների լուծմանը՝ ներառյալ շտապօգնության ավտոպարկի թարմացումը և քաղաքային տրանսպորտային համակարգերի արդիականացումը: Չինաստանը նաև կարևոր դեր է ունեցել Հայաստանի՝ ՔՈՎԻԴ-19 համավարակի դեմ պայքարի ընթացքում՝ տրամադրելով համապատասխան օգնություն և նյութատեխնիկական աջակցություն: 2024թ-ին, երբ ուժեղ տեղումների հետևանքով առաջացած աղետալի ջրհեղեղները վնասել էին Լոռու և Տավուշի մարզերի համայնքներն ու ենթակառուցվածքները, Չինաստանը

[70] Arlis. «ՀՀ Կառավարության որոշում, 30 օգոստոսի 2018 թվականի N 970-Ա», 2025, մուտք՝ մարտի 16, 2025: https://www.arlis.am/hy/acts/133199

[71] Արմենպրես, «Չինաստանը Հայաստանին նվիրաբերեց շտապ բուժօգնության 200 ավտոմեքենա», հոկտեմբերի 17, 2018: https://is.gd/6e8KYd

Հայաստանին տրամադրել է 100,000 ԱՄՆ դոլարի օգնություն՝ վերականգնման աշխատանքներին աջակցելու նպատակով: Այս օգնությունը կազմել է աղետից տուժած տարածքների վերականգնման համար պետական բյուջեից հատկացված միջոցների 5.7%-ը, ինչը բավականին նշանակալի ցուցանիշ է:[72]

Միևնույն ժամանակ, Չինաստանը **ֆինանսավորել է նաև այնպիսի ծրագրեր, որոնք ավելի շատ համահունչ են եղել դոնորի ռազմավարական շահերին,** քան օգնություն ստացող երկրի մարդասիրական կամ զարգացման կարիքներին՝ օրինակ՝ հայ–չինական բարեկամության դպրոցի կառուցումը (2016–2018թթ-ին) և Հայաստանի Հանրային հեռուստատեսության նոր հեռարձակման ստուդիայի նախագծումն ու շինարարությունը (մեկնարկել է 2024թ-ի սեպտեմբերին):

2016-2018թթ-ի ընթացքում Չինաստանի կառավարությունը Երևանում կառուցել է **հայ-չինական բարեկամության դպրոց**, որտեղ հարյուրավոր հայ աշակերտներ միջնակարգ և ավագ դպրոցի ստանդարտ ուսումնական ծրագրերին զուգահեռ սովորում են չինարեն: Պաշտոնական աղբյուրների համաձայն դպրոցի կառուցման և կահավորման ընդհանուր արժեքը գերազանցել է 12 միլիոն ԱՄՆ դոլարը:[73] Սկզբնապես դպրոցը նախատեսված էր շուրջ 400 աշակերտների համար, բայց այսօր այնտեղ սովորում են 700 աշակերտ:[74] Օրինակ՝ 2017 և 2018 թվականներին շինանյութերի տեսքով տրամադրված օգնությունը կազմել է համապատասխանաբար 1,264 և 1,555 տոննա, ինչը զգալի աճ է՝ համեմատած 2016 թ-ի ընդամենը 192 տոննայի հետ: Արժեքային արտահայտությամբ՝ այն կազմել է 2017թ-ին Չինաստանի՝ Հայաստանին տրամադրած օգնության 12%-ը (Գծապատկեր 17):

Ինչպես երևում է Գծապատկեր 17-ից՝ Չինաստանի կողմից Հայաստանին տրամադրված օգնության հաջորդ նշանակալի աճը գրանցվել է 2021թ-ին: Այդ տարի Չինաստանը Հայաստանին տրամադրել է շուրջ 6.1 միլիոն ԱՄՆ դոլարի արտաքին օգնություն, ինչը ավելի քան 2 անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Օգնության այս աճը հիմնականում պայմանավորված էր ՔՈՎԻԴ-19 համավարակի ժամանակ տրամադրված առողջապահական աջակցությամբ: Մասնավորապես, 2021թ-ին Չինաստանի կառավարությունը Հայաստանին նվիրաբերել է 100,000 դեղաչափ Sinovac պատվաստանյութ, 1,000 կորոնավիրուսի թեստերի հավաքածու,

[72] ՀՀ ԱԳՆ. Տարեկան հաշվետվություն. 2012. մուտք մարտի 16, 2025. https://is.gd/1KCwLq

[73] Ազատություն Ռադիոկայան. “Chinese School Inaugurated in Armenia”. Օգոստոսի 22, 2018. Մուտք՝ մարտի 16, 2025. https://is.gd/8nwuo3

[74] Հայ-չինական բարեկամության դպրոցի կայք https://is.gd/6M82qL

ինչպես նաև հազարավոր բժշկական դիմակներ, ձեռնոցներ և այլ պաշտպանիչ պարագաներ: Բացի այդ, Չինաստանը տրամադրել է բժշկական պաշտպանիչ համազգեստներ և թոքերի արհեստական օդափոխման սարքեր՝ 110,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ:[75] Ընդհանուր առմամբ, համավարակի հետևանքներին արձագանքելու նպատակով Չինաստանի կողմից Հայաստանին տրամադրված օգնությունը կազմել է շուրջ **2 միլիոն ԱՄՆ դոլար:**[76]

Գծապատկեր 17. Չինաստանի կողմից Հայաստանին տրամադրված օգնությունը ըստ ապրանքային խմբերի 2010-2024 թթ-ին



Աղբյուր՝ Արմսպրատ

Չինաստանի կողմից Հայաստանում իրականացվող խոշորագույն օգնության ծրագրերից մեկը **Հայաստանի Հանրային հեռուստատեսության նոր հեռարձակման տաղավարի կառուցումն է**, որի շինարարությունը մեկնարկել է 2024թ-ի սեպտեմբերին: 2023թ-ի հունիսի 2-ին Հայաստանի Հանրապետության

[75] Արմենպրես. “China to Donate to Armenia 1000 Coronavirus Test Kits”. մարտի 6, 2020. Մուտք մարտի 16, 2025. https://is.gd/gKSAeB

[76] AIDDATA. AidData's Global Chinese Development Finance Dataset, Version 3.0. Մուտք՝ Հունիսի 13, 2025. https://is.gd/DMYoX4

կառավարությունը՝ ի դեմս ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, «Հանրային հեռուստատեսություն» ՓԲԸ-ն և Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը ստորագրեցին եռակողմ համաձայնագիր **Հայաստանի Հանրային հեռուստաընկերության նոր՝ 8-րդ տաղավարի կառուցման վերաբերյալ**[77]**:** Այս ծրագրի համար Չինաստանը կտրամադրի ավելի քան 10 միլիարդ դրամ (**մոտ 26 միլիոն ԱՄՆ դոլար)** աջակցություն, որի միջոցով կառուցվող տաղավարը կդառնա հայկական հեռուստատեսության առաջին նոր արտադրական ենթակառուցվածքը անկախությունից ի վեր՝ իր տարածքում գործող 1000 քառակուսի մետր մակերեսով ստուդիայով[78]: Թեև սա Չինաստանի ամենախոշոր ծրագիրն է Հայաստանում, այն Չինաստանի կառավարության և Հայաստանի Հանրային հեռուստաընկերության համագործակցության առաջին դեպքը չէ: 2015թ-ին Չինաստանի կառավարությունը Հանրային հեռուստաընկերությանը նվիրաբերել էր շարժական HD հեռուստակայան, հագեցած 10 տեսախցիկով, ինչպես նաև HD արբանյակային հեռարձակման մոդուլով և թվային արբանյակային նորությունների հավաքագրման (DSNG) համակարգով:[79]

Բացի այդ, Չինաստանը նախկինում պատրաստակամություն է ցուցաբերել Հայաստանին ռազմական օգնություն տրամադրելու հարցում: Այնուամենայնիվ աջակցության բնույթի պատճառով հավանաբար այն ամբողջությամբ չի արտացոլվել պաշտոնական վիճակագրական տվյալներում: Օրինակ՝ 2013թ-ին Չինաստանը հանձնառություն էր ստանձնել Հայաստանին տրամադրել տարեկան 5 միլիոն յուանի (մոտ 825 հազար ԱՄՆ դոլարի) չափով ռազմական օգնություն:[80] Հետագայում՝ 2017թ-ին, Հայաստանի պաշտպանության նախարարի պաշտոնական այցի ընթացքում կողմերը ստորագրել են լրացուցիչ 10 միլիոն յուանի (մոտ 1.5 միլիոն ԱՄՆ դոլարի) օգնության փաթեթ՝ նախատեսված Հայաստանի պաշտպանական ոլորտին աջակցելու համար:[81][82] Սակայն, որոշ փորձագետների կարծիքով՝ Ռուսաստանը

---

[77] Առաջին լրատվական ալիք, «ԲՏԱ նախարարը ծանոթացել է Հանրային հեռուստաընկերության նոր հեռուստաստուդիայի շինաշխատանքների ընթացքին», մայիս 21, 2025: https://is.gd/lSyDzJ

[78] Առաջին լրատվական ալիք, «10 մլրդ դրամ աջակցություն Չինաստանից՝ ՀՀ ամենամեծ հեռուստատեսային տաղավարի կառուցման համար», հունիս 02, 2023: https://is.gd/UvQlqQ

[79] 1tv.am. առաջին ալիքի կայք. մուտք մարտի 16, 2025.: https://www.1tv.am/en/history/2008-2016

[80] Հանրային ռադիո. “Armenia, China to Cooperate in the Field of Defense”. Դեկտեմբերի 27, 2013. Մուտք՝ մարտի 16, 2025. https://is.gd/gQ9tXB

[81] «ԱՌԿԱ» Լրատվական Գործակալություն. “China to Provide 10 Million Yuan Aid to Armenian Defense Ministry”. Սեպտեմբերի 5, 2017. Մուտք՝ մարտի 16, 2025. https://is.gd/eWETYg

[82] ArmeniaTV News. “Վիգեն Սարգսյանին ներկայացրել են չինական գերժամանակակից սպառազինությունը”. սեպտեմբերի 6, 2017. Մուտք՝ մարտի 16, 2025. https://is.gd/rzWE0i

կարող էր խոչընդոտել ռազմական աջակցության տրամադրմանը Հայաստանին՝ հաշվի առնելով իր ազդեցությունը տարածաշրջանում:

Ամփոփելով՝ վերջին տասնհինգ տարիների ընթացքում Չինաստանի կողմից Հայաստանին տրամադրված օգնության ընդհանուր ծավալը և մասնաբաժինը նվազել են: Այնուամենայնիվ, վերջին տարիներին Չինաստանը դրսևորում է աճող հետաքրքրություն՝ զարգացման համագործակցության միջոցով Հարավային Կովկասում իր ներկայությունն ու ազդեցությունը ընդլայնելու ուղղությամբ, ինչը կարող է հանգեցնել Հայաստանին տրամադրվող օգնության ծավալների աճին: Չինաստանը արդեն խորացրել է համագործակցությունը Վրաստանի և Ադրբեջանի հետ, իսկ Հայաստանում 2024թ-ի վերջին մեկնարկել է երկրում իր ամենախոշոր զարգացման ծրագիրը:

Գլուխ 5. Չինաստանի ներկայությունն Հայաստանի կրթական համակարգում

5.1. Չինաստանի ներկայությունը համաշխարհային կրթական ասպարեզում

«Փափուկ ուժը» (soft power) չափելու և դրա ազդեցությունը քաղաքական ու մակրոտնտեսական զարգացումների վրա գնահատելու ուղղությամբ կատարվել են մի շարք փորձեր: Դրանց մեծ մասը երկրի «փափուկ ուժը» համաշխարհային մակարդակով չափելիս առանձնացնում է կրթությունը որպես առանցքային գործոն, այն դիտարկելով մշակույթի, թվային ներկայության, մասնավոր հատվածի և պետական ինստիտուտների հետ մեկտեղ:[83][84] Երկրի՝ միջազգային ուսանողներին ներգրավելու կամ ակադեմիական փոխանակումներ կազմակերպելու կարողությունը դիտվում է որպես դիվանագիտության արդյունավետ գործիք, որը ստեղծում է երկարաժամկետ ազդեցություն և գնալով ավելի կարևոր դեր է ստանձնում փափուկ ուժի ձևավորման ու ամրապնդման գործընթացում:

Չինաստանը, որը վերջին տասնամյակների ընթացքում զգալիորեն ընդլայնել է իր «փափուկ ուժը», գնալով ավելի ակտիվորեն է օգտագործում մշակույթն ու կրթությունը որպես վերջինիս միջոց և իր տնտեսության խաղաղ և բարեկամական կերպարը խթանող լծակ[85][86]: Այս ջանքերի օրինակներից մեկը **Կոնֆուցիուսի ինստիտուտի** ստեղծումն է: Կոնֆուցիուսի ինստիտուտները Չինաստանի կառավարության կողմից ֆինանսավորվող ոչ առևտրային կրթական հաստատություններ են, որոնք ստեղծվել են չինարեն լեզուն և մշակույթը տարածելու, մշակութային փոխանակումները խթանելու և աշխարհում չինարենի դասավանդմանն աջակցելու նպատակով: 2008թ-ից ի վեր Կոնֆուցիուսի ինստիտուտների քանակն ամբողջ աշխարհում գնալով աճում է, հատկապես 2013թ. «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության

[83] Serhan Cevik, Tales Padilha. “Measuring Soft Power: A New Global Index”. IMF working papers. Հոկտեմբերի 4, 2024. https://is.gd/EVPhPl
[84] USC Center on Public Diplomacy. “The Soft Power 30: A Global Ranking of Soft Power 2018”. https://is.gd/TSDUjo
[85] Drand Finance. “Global Soft Power Index 2024”. https://is.gd/udQITZ
[86] Serhan Cevik, Tales Padilha. “Measuring Soft Power: A New Global Index”. IMF working papers. Հոկտեմբերի 4, 2024. https://is.gd/EVPhPl

պաշտոնական մեկնարկից հետո[87]: Այս ինստիտուտները դարձել են Չինաստանի «փափուկ ուժի» իրագործման առանցքային գործիք և վերջին մի քանի տարում եղել են քննադատությունների, մտահոգությունների և տարաձայնություններ առարկա: Ըստ ԱՄՆ Գիտնականների ազգային ասոցիացիայի (US National Association of Scholars) կողմից 2017-ին. անցկացված ուսումնասիրության՝ Կոնֆուցիուսի ինստիտուտներում առկա է ակադեմիական ոչ բարեխիղճ վարք և գրաքննություն:

2019թ-ին ԱՄՆ Ազգային պաշտպանության լիազորման մասին օրենքով (US National Defense Authorization Act) սահմանվեցին կարգավորիչ պահանջներ և դաշնային ֆինանսավորման հնարավոր չեղարկում ԱՄՆ այն համալսարանների համար, որտեղ գործում են Կոնֆուցիուսի ինստիտուտներ: 2019 թ-ին ԱՄՆ-ում ընդունվեծ օրենսդրական նախագիծ, որը սահմանեց վերահսկողության խստացված կանոններ այն համալսարանների համար, որտեղ գործում են Կոնֆուցիոսի ինստիտուտներ, և նախատեսեց դաշնային ֆինանսավորման կասեցման հնարավորություն՝ վերահսկողության պահանջները չպահպանելու դեպքում: Ավելին, 2021թ-ի մարտի 5-ին ԱՄՆ Սենատը քվեարկեց՝ արգելելով Կրթության դեպարտամենտի ֆինանսավորումը այն համալսարաններին, որոնք իրենց կազմում ունեն Կոնֆուցիոսի ինստիտուտներ, եթե դրանք չեն բավարարում վերահսկողության պահանջներին: Այս դաշբային քաղաքականության արդյունքում Միացյալ Նահանգներում ավելի քան 100 Կոնֆուցիոսի ինստիտուտ փակվել են, և 2023 թ-ի հունիսի դրությամբ երկրում գործում էին ընդամենը 10 նման ինստիտուտ:[88]

Վերջին երկու տասնամյակների ընթացքում Չինաստանը կրթության ոլորտում **երկրորդական դերակատարից վերածվել է համաշխարհային ազդեցություն ունեցող ուժի**: Եթե 2000-ականների սկզբին Չինաստանում սովորում էին 100,000-ից պակաս միջազգային ուսանողներ, ապա 2017 թվականին նրանց թիվը հասել է 489,200-ի, իսկ 2023 թվականին՝ մոտ 680,000-ի:[89][90][91] Այս աճը պատահական չէ. այն չինական համալսարանների միջազգայնացմանն ուղղված պետական

[87] Ebel, P. "China's Global Education Strategy and the Growing Divide Between East and West". Մայիսի 26, 2023. Մուտք՝ Օգոստոսի 20, 2025. https://is.gd/I1iw74
[88] National Association of Scholars. "How Many Confucius Institutes Are in the United States?". Թարմացված է Հունսի 22-ին, 2023. https://bit.ly/3SDTmAG
[89] Foreign Policy. "International Student Enrollment in China by Funding Source". https://is.gd/ex1rbu
[90] ՉԺՀ կրթության նախարարություն. "Brief report on Chinese overseas students and international students in China 2017". Ապրիլի 1, 2018. https://is.gd/FbyzNm
[91] Educations.am. "China Wants 8 Million Students to Enroll in Transnational Education". Սեպտեմբերի 18, 2025. https://is.gd/MBx5Xv

քաղաքականության արդյունք է, ներառյալ անգլերեն դասավանդվող ծրագրերի ընդլայնումը, ուժեղ կրթաթոշակային ծրագիրը և միջազգային համագործակցության ինստիտուցիոնալ խթանները, որոնք բոլորը սերտորեն կապված են Չինաստանի՝ կրթության միջոցով իր համաշխարհային ազդեցությունը մեծացնելու նկրտումների հետ: Սակայն այս ռազմավարությունը միայն արտասահմանյան ուսանողների թվի աճը խթանելու նպատակ չի հետապնդում: Բարձրագույն կրթության ոլորտում Չինաստանի առաջընթացը համաշխարհային ասպարեզում հիմնված է ազգային առաջնահերթությունների կանխամտածված վերանայման վրա: Չինաստանի կրթության նախարարությունը իր միջազգային կրթական քաղաքականությունը համադրել է արտաքին քաղաքականության և տնտեսական զարգացման ավելի լայն նպատակների հետ՝ նախևառաջ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության հետ: **Կրթությունը դարձել է փափուկ ուժի գործիք,** որը նպաստում է տարածաշրջանային համագործակցության խորացմանը, չինարենի և չինական մշակույթի տարածմանը, ինչպես նաև ռազմավարական գործընկերությունների ձևավորմանը Ասիայում, Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում և Արևելյան Եվրոպայում: ՏՉինաստանի կրթաթոշակային խորհուրդը (China Scholarship Council, CSC) կարևոր դեր է խաղացել այս գործում՝ դարձնելով կրթությունը Չինաստանում մատչելի և գրավիչ՝ տրամադրելով ամբողջությամբ ֆինանսավորվող կրթաթոշակներ, որոնք ներառում են ուսման վարձը, և այլ ծախսեր՝ ընդհուպ մինչև ճանապարհային ծախսերը:

Չինաստանը կրթությունը նաև **ռազմավարական կերպով ինտեգրել է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության մեջ**՝ այն դիտարկելով որպես փափուկ ուժի գործիք, որի միջոցով ձևավորվում են ընկալումներ, ամրապնդվում է ազդեցությունը և զարգանում են երկարաժամկետ միջազգային հարաբերություններ: 2015 թ-ին Չինաստանի ազգային զարգացման և բարեփոխումների հանձնաժողովը, Արտաքին գործերի նախարարությունը և Առևտրի նախարարությունը հրապարակեցին «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու և 21-րդ դարի ծովային մետաքսի ճանապարհի համատեղ կառուցման տեսլական և գործողություններ» (“Vision and Actions on Jointly Building Silk Road Economic Belt and 21st Century Maritime Silk Road”) վերնագրով փաստաթուղթը, որտեղ ներկայացված են նախաձեռնության շրջանակում համագործակցության հիմնական ուղղությունները: Դրանք ներառում են քաղաքականությունների համակարգման, անխոչընդոտ առևտրի, տրանսպորտային և ենթակառուցվածքային կապերի, ֆինանսական ինտեգրման և ժողովուրդների միջև

կապերի ամրապնդման ոլորտները: Մարդկային կապերի ամրապնդման շրջանակում Չինաստանը հայտարարել է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության մաս կազմող երկրներում մշակութային և ակադեմիական փոխանակումները խթանելու իր մտադրության մասին, ներառյալ ուսանողական փոխանակումները, վերապատրաստումներ և այլն: Այս նպատակով Չինաստանը ամեն տարի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» երկրներին տրամադրել է 10,000 հատ պետական կրթաթոշակ:[92] 2016թ-ին Չինաստանի կրթության նախարարությունը հրապարակել է **«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության կրթական գործողությունների ծրագիրը**, որով սահմանվում է կրթությունը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության մեջ ինտեգրելու համապարփակ ռազմավարությունը:[93] Կրթաթոշակների, ուսանողական փոխանակումների և համատեղ ակադեմիական ծրագրերի միջոցով այն գործընկեր երկրներում ձևավորում է ապագա առաջնորդների և մասնագետների ցանց, որոնք ծանոթ են չինական մշակույթին, լեզվին և արժեքներին: Չնայած Հայաստանը չի գտնվում «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության հիմնական ուղիների վրա, երկրի ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցել են մի շարք թեմատիկ սեմինարների և համաժողովների, ինչը վկայում է Չինաստանի գլոբալ զարգացման ռազմավարությամբ և դրանում ներգրավվածությամբ Հայաստանի հետաքրքրվածության մասին: Կոնֆուցիուսի ինստիտուտի հայկական մասնաճյուղի աջակցությամբ Հայաստանում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ «Վերարժևորելով «Գոտի և ճանապարհ նախաձեռնության» դինամիկան. հիմնական միտումներ» միջազգային համաժողովը, որը կազմակերպվել էր Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի կողմից:[94] Չինաստանում տեղի են ունեցել այլ միջոցառումներ, որոնց ընթացքում Չինաստանի կառավարությունն ամբողջովին ֆինանսավորել է հայ պատվիրակների մասնակցությունը, օրինակ՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության մասնակից երկրների համար ոչ նյութական մշակութային ժառանգության և մշակութային ստեղծագործության ինտեգրված զարգացման սեմինարը»:

---

[92] Asia Pacific Energy Portal. “Vision and Actions on Jointly Building Silk road Economic Belt and 21st-Century Maritime Silk Road”. 2015. https://is.gd/eNk3SZ

[93] Xinhua Silk Road Information Service. “Education Action Plan for the Belt and Road Initiative”. Հունիսի 16, 2020. https://is.gd/cJHboz

[94] ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ. “UNDERSTANDING the DYNAMIC of BELT and ROAD INITITAIVE: MAIN TRENDS”. https://is.gd/Cme9VM

Ավելին, Չինաստանի կողմից աշխարհում կիրառվող բոլոր կրթական գործիքները՝ կրթաթոշակներ, ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրեր, համատեղ կրթական նախաձեռնություններ, մասնագիտական վերապատրաստումներ և Կոնֆուցիոսի ինստիտուտներ, իրականացվում են նաև Հայաստանում: Այս ծրագրերի միջոցով Չինաստանը ամրապնդել է իր ներկայությունը Հայաստանի կրթական համակարգում, ստեղծելով հիմք՝ հարաբերությունների հետագա խորացման համար:

5.2. Չինաստանի աճող ներկայությունը Հայաստանի կրթական համակարգում

1991թ-ին Հայաստանի անկախացումից ի վեր Հայաստանը և Չինաստանը ստորագրել են մի շարք համաձայնագրեր գիտության և կրթության բնագավառում, մասնավորապես՝ ՀՀ կառավարության և ՉԺՀ կառավարության միջև մշակույթի, կրթության, առողջապահության, սպորտի և զբոսաշրջության բնագավառներում համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը (1992), գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը (1992), կրթության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը (2000) և կրթության և գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին համաձայնագիրը (2015): Ստորագրվել են նաև այլ փաստաթղթեր, ինչպիսիք են՝ 2012թ-ին ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի և Շանհայի կիրառական ֆիզիկայի ինստիտուտի միջև փոխըմբռնման հուշագիրը, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և ՉԺՀ բնական պաշարների նախարարության երկրի արբանյակային հեռազննման կիրառության կենտրոնի միջև ստորագրվել է «Արբանյակային պատկերների կիրառման ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը:[95] Վերջին տասնամյակում համագործակցությունն զգալիորեն խորացել է. Հայաստանում ստեղծվել է տարածաշրջանում առաջին Կոնֆուցիուսի ինստիտուտը[96], բացվել է Հայ-չինական բարեկամության դպրոցը, չինարեն ուսումնասիրողների թիվը կայուն աճ է արձանագրել, ընդլայնվել են Չինաստան այցելությունների և վերապատրաստումների հնարավորությունները:

Ներկայումս **չինարենը դասավանդվում է Հայաստանի յոթ հանրակրթական դպրոցում**՝ վեցում՝ որպես երրորդ օտար լեզու, մեկում՝ (Հայ-չինական

[95] (Հերթական հղում) ԱԳՆ. «Երկկողմ հարաբերություններ. Չինաստան»
[96] Caspian Policy Center. “China-Armenia Bilateral Relations”. Մուտք՝ Հոկտեմբերի 1, 2025. https://is.gd/Nrk76g

բարեկամության դպրոց)՝ որպես հիմնական օտար լեզու:[97] Ընդհանուր առմամբ, Երևանի և մարզերի 17 հանրակրթական դպրոցում գործում են չինարենի ուսուցման կենտրոններ:[98] Ավելին, ստորագրվել են մի շարք հուշագրեր համագործակցության այլ ձևերի և հետաքրքրության դրսևորումների հետ մեկտեղ, որոնք հիմք են դնում չինարեն դասավանդող հանրակրթական դպրոցների թիվն ավելացնելու համար:[99] Ակտիվ քայլեր են ձեռնարկվում այդ դպրոցների հետաքրքրությունն ու ներգրավվածությունն ամրապնդելու համար, օրինակ՝ դպրոցների տնօրենների Չինաստան ամենամյա այցելությունների միջոցով:

Հայաստանում Չինաստանը գնալով ավելի լայնորեն է կիրառում փափուկ ուժի գործիքներ, որպեսզի ամրապնդի իր ներկայությունն ու առաջ մղի իր շահերը: Այդ ջանքերն առավել տեսանելի են մշակույթի, կրթության և մարդասիրության բնագավառներում: Ակնառու օրինակներից է Երևանում գործող Հայ-չինական բարեկամության դպրոցը, որը կառուցվել և կահավորվել է Չինաստանի կառավարության կողմից 2016-2018թթ-ին՝ ավելի քան 12 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրմամբ: Դպրոցը, որը համարվում է Հայաստանում ամենաժամանակակից կրթական հաստատություններից մեկը, գործարկվել է ոչ միայն բարձր ակադեմիական չափանիշներ ապահովելու նպատակով, այլև ծառայում է որպես երկկողմ մշակութային համագործակցության առաջատար գործիք: Այն հայ աշակերտներին եզակի հնարավորություն է տալիս ուսումնասիրել չինարեն լեզուն և մշակույթը որպես հանրակրթական կրթության մաս՝ ստեղծելով Չինաստանին և վերջինիս արժեքներին վաղ տարիքից ծանոթանալու անմիջական ուղի: Հայ-չինական բարեկամության դպրոցի աշակերտները նաև օգտվում են Չինաստանում բարձրագույն կրթության ստանալու եզակի հնարավորությունից: Հայաստանի կառավարության և Կոնֆուցիուսի ինստիտուտի աջակցությամբ դպրոցի շրջանավարտները կարող են անվճար շարունակել իրենց ուսումը չինական համալսարաններում՝ օգտվելով լրիվ ֆինանսավորվող կրթաթոշակներից, որտեղ ծնողները հոգում են միայն տրանսպորտային ծախսերը: 2024թ-ի դրությամբ մոտ 20

[97] ԵՊԼՀ Կունֆուցիոսի ինստիտուտ. Ֆեյսբուքյան էջի հրապարակում. Ապրիլի 4, 2025. https://is.gd/FAqPI6
[98] ՀՀ ԿԳՄՄՆ. “Չինարեն դասավանդող և ուսումնասիրող մասնագետները պարգևատրվել են”. Դեկտեմբերի 21, 2024. https://is.gd/MwdvK2
[99] Հարցազրույց ԵՊԼՀ Կոնֆուցիոսի ինստիտուտի ղեկավարի հետ

ուսանող արդեն օգտվել է այս հնարավորությունից:[100] Ծրագրի նկատմամբ հետաքրքրությունը կայուն աճ է արձանագրում, ավելանում է դիմորդների թիվը: Չնայած Հայ-չինական բարեկամության դպրոցն սկզբնապես նախատեսված էր 400 աշակերտի համար, այն արագ գերազանցեց սպասումները, և այսօր այնտեղ սովորում է շուրջ 700 աշակերտ: Այս արագ աճը վկայում է մի կողմից՝ չինարեն լեզվի նկատմամբ աճող հետաքրքրության մասին Հայաստանում, իսկ մյուս կողմից՝ Չինաստանի ավելի լայն ռազմավարության արդյունավետության մասին, որի նպատակն է կրթության միջոցով ձևավորել երկարաժամկետ բարեկամական վերաբերմունք և ամրապնդել իր ազդեցությունը:

Չինարեն դասավանդվում է նաև Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ) և Ռուս-հայկական համալսարանում, իսկ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը (ԵՊԼՀ) առաջարկում է հայերեն-չինարեն թարգմանության մասնագիտացված ծրագիր: Հայաստանում չինարեն սովորողների թիվը տարեցտարի աճում է. եթե 2018թ-ին չինարեն սովորողների թիվը մոտ 2,000 էր, ապա 2025թ-ին այդ թիվը գերազանցել է 6,000-ը:[101][102] Հայաստանի նման փոքր երկրի համար սա տպավորիչ արդյունք է: Չինարենի նկատմամբ հետաքրքրության աճի գործում կարևոր դեր է խաղում ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտը, որը հիմնադրվել է 2009թ-ին փետրվարին Չինաստանի Շանսի համալսարանի և ԵՊԼՀ նախաձեռնությամբ՝ դառնալով առաջին Կոնֆուցիուսի ինստիտուտը Հարավային Կովկասում: 2016թ-ին հայկական Կոնֆուցիուսի ինստիտուտը ճանաչվել է աշխարհի 15 լավագույն Կոնֆուցիուսի ինստիտուտներից մեկը: Ինչպես նշվեց, ինստիտուտն ամբողջությամբ ֆինանսավորվում է Չինաստանի կառավարության կողմից, տարեկան բյուջեն կազմում է շուրջ 80-100 ԱՄՆ դոլար:[103] ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտը խթանում է չինարենի ուսումնասիրությունը՝ ամբողջ երկրում հիմնելով լեզվի կենտրոններ: Հենց ինստիտուտի ջանքերի շնորհիվ է, որ չինարենը որպես երրորդ լեզու դասավանդվում է մի շարք պետական դպրոցներում և համալսարաններում:

---

[100] Asryan, G. “Soft Power: China's Spheres of Influence in Armenia. Analysis and Human Stories”. 2024. Մուտք՝ Մայիսի 12, 2025. https://tinyurl.com/4k6ufzc6

[101] ԵՊՀ. “Չինարեն սովորող ԵՊՀ ուսանողները ստացան ավարտական վկայականներ”, հունիսի 19, 2018. Https://is.gd/1hxajq

[102] News.am. “Չինաստանը և Հայաստանը նշում են դիվանագիտական հարաբերությունների հաստատման 33-ամյակը”, Ապրիլի 5, 2025. https://is.gd/8sRTHm

[103] Հարցազրույց ԵՊԼՀ Կոնֆուցիոսի ինստիտուտի ղեկավարի հետ

Հայաստանի Կոնֆուցիուսի ինստիտուտը խթանում է Չինաստանի նկատմամբ հետաքրքրությունը՝ ոչ միայն չինարենի ուսուցումը խրախուսելով, այլև կազմակերպելով մշակութային և կրթական բազմաթիվ միջոցառումներ: Վերջին տարիներին այս նախաձեռնությունների շրջանակն ընդլայնվել է՝ ընդգծելով Պեկինի ջանքերը երկրում «փափուկ ուժի» ազդեցությունն ամրապնդելու ուղղությամբ: Վերջին շրջանի ամենակարևոր զարգացումներից մեկը 2025-ին «Հայկական չինագիտության տարեգրքի» անդրանիկ թողարկումն էր. սա առաջին հայկական ակադեմիական հրատարակությունն է, որն ամբողջությամբ նվիրված է Չինաստանի և չինական քաղաքակրթության ուսումնասիրությանը: Ներկայումս տարեգիրքը հրատարակվում է տարեկան մեկ անգամ, սակայն կան ծրագրեր՝ հաճախականությունը հասցնելու տարեկան երկու անգամի:[104]

Այլ նշանակալի նախաձեռնությունների շարքում կարելի է առանձնացնել առաջին անգամ Հայաստանի **մասնակցությանը «Չինական կամուրջ» մրցույթին 2014թ-ին՝** Հայաստանում Չինաստանի դեսպանության և Կոնֆուցիուսի ինստիտուտի աջակցությամբ:[105] Այս ամենամյա միջազգային մրցույթը նախատեսված է չինարենը որպես ոչ մայրենի լեզու օգտագործողների համար և հարթակ է տրամադրում աշխարհի տարբեր երկրների ուսանողներին՝ ցուցադրելու իրենց լեզվական հմտությունները և մշակութային գիտելիքները: Սկսած նախաձեռնության մեկնարկից՝ Հայաստանը ամեն տարի մասնակցել է դրան, աստիճանաբար ընդլայնելով ինչպես իր մասնակցությունը, այնպես էլ մասնակցության մակարդակը: Այս առումով նշանակալի էր 2022թ-ը, երբ մրցույթի ազգային փուլին մասնակցելու հնարավորություն ստացան ոչ միայն հայկական բուհերի և ավագ դպրոցների, այլև տարրական դպրոցների աշակերտները, ինչն արտացոլում է չինարեն լեզվի նկատմամբ հետաքրքրության աճը: Մասնակիցների թիվը նույնպես զգալիորեն աճել է. առաջին անգամ հայկական փուլին մասնակցել են 10-ից պակաս անձ, մինչդեռ 2022թ-ին այդ թիվը գերազանցել էր 60-ը և շարունակել աճել նաև հաջորդ տարիներին:[106][107] Լեզվական հմտություններից զատ, մրցույթը դարձել է մշակութային

[104] ABnews. “Չինարենի ուսուցումից դեպի չինագիտություն” Հոկտեմբերի 24, 2024. https://is.gd/hL7yq4
[105] ԵՊԼՀ “2014 տարեկան հաշվետվություն ”. https://is.gd/lzwfFk
[106] ԵՊՀ. “«Չինարենի կամուրջ» միջազգային մրցույթը Հայաստանում”. Մայիսի 11, 2015 https://is.gd/D8XgNf
[107] ՀՀ ԿԳՄՄՆ. “«Չինարենի կամուրջ» միջազգային մրցույթի հայաստանյան փուլի հաղթողները կմեկնեն Չինաստան”. Հուլիսի 1, 2022. https://escs.am/am/news/13130

միջոցառում՝ խթանելով չինական ավանդույթների նկատմամբ հետաքրքրությունը և ամրապնդելով երկու երկրների միջև կրթական և մշակութային կապերը:

2019թ-ին Հայաստանի և Չինաստանի կրթության նախարարություններն ստորագրեցին կրթության ոլորտում համագործակցության համաձայնագիր, որի համաձայն՝ երկրներից յուրաքանչյուրը **տարեկան 15 ուսանողի ֆինանսավորում է տրամադրում** մյուս երկրում սովորելու համար:[108] Մինչ օրս Չինաստանը տարեկան ընդհանուր առմամբ առաջարկել է ավելի քան 15 կրթաթոշակ, երկու բացառությամբ՝ 8 և 11 (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Չինաստանի կառավարության կողմից 2019թ-ի համաձայնագրի շրջանակում հայ ուսանողներին տրամադրվող տարեկան կրթաթոշակները[109]

	2020-21	2021-22	2022-23	2023-24	2024-25	2025-26
Ընդամենը կրթաթոշակներ	**11**	**16**	**22**	**8**	**20**	**16**
Որից՝						
Բակալավրիատ	4	6	11	3	-	-
Մագիստրատուրա	5	7	8	4	14	12
Ասպիրանտուրա	2	3	2	1	3	2
Դոկտորանտուրա	-	-	-	-	2	1
Մասնագիտական վերապատրաստում (մեկ տարի)	-	-	1	1	1	1

Այնուամենայնիվ, մինչև 2019թ-ի համաձայնագրի կնքումը Հայաստանի և Չինաստանի միջև նախկինում կնքված միջկառավարական համաձայնագրերի շրջանակներում հասանելի էին մի շարք այլ կրթաթոշակներ ևս, որոնք հնարավորություն էին տալիս հայ ուսանողներին կրթություն ստանալ Չինաստանում տարբեր մասնագիտություններով և մակարդակներում: Տարբեր միջկառավարական համաձայնագրերի շրջանակներում 2024թ-ին Չինաստանում Հայաստանից սովորում էր 15 ուսանող՝ 2009թ-ի 9-ի համեմատ:

[108] ՀՀ ԿԳՄՄՆ. "ՀՀ և ՉԺՀ կրթության նախարարությունների միջև համաձայնագիր" [Ռուսերեն]. https://is.gd/NHrNwd

[109] ՀՀ ԿԳՄՄՆ. ՉԺՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու մրցույթի մասին հայտարարություն 2025-26, 2024-25, 2023-24, 2022-23, 2021-22, 2020-21

Գծապատկեր 18. Հայաստանից միջկառավարական համաձայնագրերի հիման վրա Չինաստանում սովորող ուսանողների թիվը



Աղբյուր՝ ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

Սակայն միջկառավարական համաձայնագրերն միակը չեն, որ ապահովել են հայաստանցի սովորողների կրթությունը Չինաստանում: Կոնֆուցիոսի ինստիտուտը միայն 2024թ-ին տրամադրել է 30 կրթաթոշակ:[110] Բացի այդ, 2025թ-ին Կոնֆուցիուսի ինստիտուտը կազմակերպել է ԵՊԼՀ 8 ուսանողի 1-ամսյա այցը Շանհայի բիզնես դպրոց՝ զբոսաշրջություն ուսումնասիրելու:[111] Հայ ուսանողները և հետազոտողները կարող են օգտվել նաև Չինաստանի կառավարության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-յի հետ համատեղ ստեղծված **«Չինական մեծ պատ» կրթաթոշակների ծրագրից**[112], ինչպես նաև Պեկինի տեխնոլոգիական համալսարանում ուսանելու կրթաթոշակներից:[113] ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Չինաստանի կրթության նախարարության միջև կնքված համաձայնագրի շրջանակում չինացի ուսանողները ևս հնարավորություն ունեն հայկական համալսարաններում

[110] ԵՊԼՀ Կունֆուցիոսի ինստիտուտ. Ֆեյսբուքյան էջի հրապարակում. Ապրիլի 4, 2025. https://is.gd/FAqPI6

[111] Հարցազրույց ԵՊԼՀ Կոնֆուցիոսի ինստիտուտի ղեկավարի հետ

[112] ՀՀ ԿԳՄՄՆ. "Կրթաթոշակի հնարավորություն՝ Չինաստանի համալսարաններում ուսանելու և գիտահետազոտական աշխատանք կատարելու համար". Հունվարի 22, 2025. https://escs.am/am/news/27000

[113] ՀՀ ԿԳՄՄՆ. "Կրթաթոշակային տեղերի մրցույթ՝ Պեկինի տեխնոլոգիական համալսարանում ուսանելու համար". Նոյեմբերի 14, 2023. https://is.gd/MhmWic

ուսումնասիրել հայագիտական առարկաներ, ինչպիսիք են պատմությունը, լեզուն, գրականությունը և այլն:[114]

Նշենք, որ 2023թ-ից ի վեր Հայաստանում Չինաստանի դեսպանությունը կազմակերպում է **Չինաստանի առաջատար համալսարանների ցուցահանդես,** որը հնարավորություն է տալիս հայ ուսանողներին, դպրոցականներին և Չինաստանում կրթություն ստանալ ցանկացողներին անձամբ հանդիպել չինական համալսարանների ներկայացուցիչների հետ, ծանոթանալ նրանց ընդունելության գործընթացին, կրթաթոշակներին և մասնագիտություններին: 2025թ-ին ցուցահանդեսին մասնակցել է Չինաստանի 40 առաջատար համալսարան, այդ թվում՝ Շանհայի վարկանիշային աղյուսակի լավագույն 50-ի մեջ մտնող 3 համալսարան[115].

Վերջին տասնամյակում հայկական և չինական համալսարանների միջև գործընկերությունը խորացել է, և այժմ գրեթե բոլոր խոշոր հայկական համալսարաններն այս կամ այն ձևով համագործակցում են չինական բարձրագույն ուսումնական և հետազոտական հաստատությունների հետ: Ակադեմիական կապերի այս ցանցը գնալով ընդլայնվում է և ներառում բազում ոլորտներ՝ համատեղ հետազոտական նախագծերից և ուսանողական փոխանակման ծրագրերից մինչև լեզվական և մշակութային նախաձեռնություններ: 2025թ-ին Կենտրոնական Եվրոպայի ասիական հետազոտությունների ինստիտուտը (CEIAS) սկսել է համակարգված կերպով հաշվառել Հայաստանի ակադեմիական համագործակցությունը Չինաստանի հետ (Գծապատկեր 19): Համաձայն այդ տվյալների՝ 2025թ-ի դրությամբ Հայաստանը ունի առնվազն 37 ինստիտուցիոնալ կապ չինական գործընկերների հետ, այդ թվում՝ 20 չինական համալսարան, 2 պետական հաստատություն, 3 հետազոտական հաստատություն, 3 այլ տեսակի կազմակերպություն, 1 Կոնֆուցիուսի ինստիտուտ և 1 չինական կորպորացիա: Բացի այդ, 2025թ-ի սեպտեմբերին Չինաստանի Տյանցզինի առևտրի համալսարանը և Երևանի մշակույթի համալսարանը ստորագրեցին համագործակցության հուշագիր Երևանի մշակույթի համալսարանում Կոնֆուցիուսի ինստիտուտ ստեղծելու շուրջ:[116]

---

[114] ԵՊՀ. “Chinese Students Choose Armenian Studies as Their Area of Specialization”. 2024. https://is.gd/7Iwg92

[115] News.am. “Bridge of education: Yerevan hosts exhibition of China’s leading universities”. Մայիսի 16, 2025. https://is.gd/qblvLX

[116] ԵՄՀ. “Համագործակցության հուշագրի ստորագրում”. Մուտք՝ հոկտեմբերի 01, 2025. https://is.gd/DkBCfh

Այս կապերը ցույց են տալիս, թե ինչպես են կրթությունը և ակադեմիական փոխանակումը դարձել հայ-չինական հարաբերությունների կարևոր հենասյուներից մեկը:

Գծապատկեր 19. Հայկական բուհերի և հետազոտական ինստիտուտների և չինական կազմակերպությունների միջև կապերի քանակը



Աղբյուրը՝ CEIAS, Ակադեմիական ներգրավվածության հաշվարկ

Մշակութային կապերը խթանելու և չինարենի դերը Հայաստանում ամրապնդելու նպատակով Չինաստանի դեսպանությունը 2018թ-ին մեկնարկեց ամենամյա **«Չինարեն լեզվի ուսուցման և դասավանդման մրցանակը»**: Նախաձեռնության նպատակն է խրախուսել չինարենի տարածման գործում նշանակալի ներդրում ունեցած մանկավարժներին և ուսանողներին: Հիմնադրումից ի վեր մրցանակը գնալով ձեռք է բերել ավելի մեծ ճանաչում, պարգևատրվել է ավելի քան 200 ուսուցիչ և աշակերտ:[117] Բացի առանձին անհատների ձեռքբերումները գնահատելուց, այս մրցանակը նպաստել է Հայաստանում չինարեն լեզվի ուսուցիչների և սովորողների ավելի ամուր համայնքի ձևավորմանը, ինչը, իր հերթին, խորացրել է երկու երկրների կրթական և մշակութային կապերը:

Բացի կրթաթոշակներից, վերջին տարիներին **Չինաստանը հայկական կողմի համար ֆինանսավորում է տարբեր մասնագիտությունների գծով տարեկան**

[117] ՀՀ ԿԳՄՄՆ. “Չինարեն դասավանդող և ուսումնասիրող մասնագետները պարգևատրվել են”. Դեկտեմբերի 21, 2024. https://is.gd/MwdvK2

վերապատրաստումներ, որոնց թիվը գնալով աճում է: Օրինակ՝ 2024թ-ին Հայաստանում Չինաստանի դեսպանությունը ֆինանսավորել է շուրջ 450 մասնագետի վերապատրաստումը Չինաստանում:[118] Ավելին, 2025թ-ին դեսպանությունն սկսել է համագործակցել «Իմ քայլը» հիմնադրամի հետ, որը գլխավորում է ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը: 2025թ-ի սեպտեմբերի դրությամբ հայ մասնագետների հինգ խումբ արդեն գործուղվել է Չինաստան՝ մասնակցելու վերապատրաստումների, սեմինարների և փորձի փոխանակման ծրագրերի:[119]

Կոնֆուցիուսի ինստիտուտի նախաձեռնությունը՝ թողարկել Հայկական չինագիտության տարեգիրքը, որը իր տեսակի մեջ առաջին հրատարակությունն է, արտացոլում է Չինաստանի աճող ջանքերը՝ **խթանելու ակադեմիական հետաքրքրությունը և խորացնելու գիտելիքները երկրի մասին Հայաստանում**: Այս միտումը նկատելի է նաև այլ զարգացումներում՝ մասնավորապես գիտաժողովների և գիտական քննարկումների թվի աճում, որոնք հաճախ անցկացվում են Կոնֆուցիուսի ինստիտուտի աջակցությամբ:[120] Միայն 2024թ-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտը կազմակերպել է Չինաստանի և հայ-չինական հարաբերությունների վերաբերյալ չորս գիտաժողով: ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, Ռուս-հայկական համալսարանը և այլ համալսարաններ կազմակերպում են Չինաստանին նվիրված միջոցառումներ, որոնք հաճախ անցկացվում են չինացի մասնագետների և Չինաստանի դեսպանի մասնակցությամբ: Հարկ է նշել նաև, որ 2021թ-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Չինաստանի Ազգային մամուլի և հրատարակչության վարչությունը ստորագրել են «Դասական և կարևոր ստեղծագործությունների թարգմանության և հրատարակման վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր», որի շրջանակում երկրները երկուստեք համաձայնում են թարգմանել և հրատարակել միմյանց գրականությունը: Մի քանի դասական ստեղծագործություն արդեն հրատարակվել է, հետագա թարգմանություններն ընթացքի մեջ են:

---

[118] ԵՊԼՀ Կունֆուցիոսի ինստիտուտ. Ֆեյսբուքյան էջի հրապարակում. Ապրիլի 4, 2025. https://is.gd/FAqPI6

[119] Իմ Քայլ հիմնադրամ. “"My Step" Foundation is sending its 5th delegation to China”. Սեպտեմբերի 4, 2025. https://is.gd/PHLiVb

[120] Armenpress. “China is interested in Armenia's contributions to global science and culture -Ambassador”. Հունիսի 27, 2024. https://is.gd/0aSyWh

Չինաստանի և Հայաստանի համագործակցությունը կրթության և գիտության ոլորտներում աստիճանաբար դուրս է գալիս համալսարանային և պետական ծրագրերի շրջանակներից՝ ընդգրկելով նաև **վերլուծական կենտրոնների ու մասնավոր ընկերությունների նախաձեռնությամբ իրականացվող նախագծեր**: Վերջին տարիներին Հայաստանում նկատվում է ոչ առևտրային կազմակերպությունների թվի աճ, որոնք նպատակ ունեն խթանել հայ-չինական հարաբերությունների զարգացումը: Այս կազմակերպությունները կարևոր դեր են ստանձնում երկկողմ համագործակցության խորացման գործում՝ իրականացնելով մշակութային, կրթական և տնտեսական ծրագրեր: Միաժամանակ, չինական մասնավոր ընկերություններն էլ դարձել են այս ոլորտի ակտիվ դերակատարներ: Օրինակ՝ Huawei-ն աջակցում էր կրթական և տեխնոլոգիական վերապատրաստման ծրագրերի, իսկ NetDragon Websoft Holdings Limited-ը հայ ուսանողներին առաջարկում էր պրակտիկայի և փոխանակման հնարավորություններ: Մասնավորապես, 2021թ-ին **Huawei-ը** մեկնարկեց Հայաստանում իր առաջին «Սերմեր ապագայի համար» ծրագիրը՝ տաղանդների զարգացման նախաձեռնություն, որն օգնում է աշխարհի տարբեր երկրներից ուսանողներին ծանոթանալ առաջատար տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներին, զարգացնել առաջնորդական հմտություններ և ծանոթանալ չինական մշակույթին: Ծրագրին սատարում էր Հայաստանում Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպանը, որը մասնակցեց և ելույթ ունեցավ բացման արարողությանը: Ավելին, Հայաստանը և Չինաստանը դիտարկում են կրթական ոլորտում համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորություններ ՀՀ կառավարության **«Ակադեմիական քաղաք»** ռազմավարական նախաձեռնության շրջանակներում[121]. Ակադեմիական քաղաքը նախատեսվում է որպես խոշոր միջազգային կրթական կենտրոն, որը կընդունի ուսանողների, հետազոտողների և մասնագետների ամբողջ աշխարհից՝ առաջարկելով ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած և ժամանակի պահանջներին համապատասխանող ենթակառուցվածքներ և խթանելով միջազգային գործընկերության ձևավորումը:[122] Չինաստանն արդեն իսկ հետաքրքրություն է հայտնել այս հավակնոտ նախագծի մաս կազմելու հարցում, և կողմերն սկսել են քննարկումներ հնարավոր համատեղ

[121] Arminfo. “China Interested in Cooperating with Armenia under Academic Town Project”. Հունիսի 5, 2024. https://is.gd/uBvOTv

[122] Ակադեմիական քաղաքի պաշտոնական կայք. https://www.acarmenia.am/en

ծրագրերի շուրջ, որոնք կարող են ավելի ընդլայնել երկկողմ համագործակցությունը բարձրագույն կրթության, հետազոտությունների և նորարարության ոլորտներում:

Վերջին տարիներին Չինաստանի ներկայությունը Հայաստանի կրթական համակարգում կայուն կերպով աճել և ընդլայնվել է՝ տարբեր նախաձեռնությունների իրագործման շնորհիվ: Այս ծրագրերը միասին նպաստել են կրթական համագործակցության խորացմանը, մարդկանց միջև կապերի ամրապնդմանը և ստեղծել են հիմք Հայաստանի և Չինաստանի միջև երկարաժամկետ ու առավել սերտ երկկողմ հարաբերությունների զարգացման համար:

Գլուխ 6. Ռազմավարական գործընկերություն. Հայաստան-Չինաստան 2025

1992թ-ին ՀՀ և ՉԺՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր երկու երկրների համագործակցությունը զարգացել է կայուն տեմպերով՝ վերջին տասնամյակում ձեռք բերելով նոր թափ: Երկկողմ հարաբերություններում կարևոր ձեռքերում էր 2025թ-ի օգոստոսի 31-ին Հայաստանի պատվիրակության պաշտոնական այցի ընթացքում Վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Չինաստանի նախագահ Սի Ցզինփինի ստորագրած երկու երկրների միջև **ռազմավարական գործընկերություն հաստատելու մասին համաձայնագիրը**:[123]

Ընդհանուր առմամբ, Չինաստանի դեպքում գործում է դիվանագիտական գործընկերության հետևյալ հիմնական մակարդակները՝. բարեկամական-համագործակցային, համագործակցային, ռազմավարական, համապարփակ-ռազմավարական և համապարփակ-ռազմավարական-համագործակցային գործընկերություն:[124]

Չինաստանը հետևողականորեն ընդլայնում է իր գործընկերային հարաբերությունների ցանցը Հարավային Կովկասում և ավելի լայն տարածաշրջանում, ձևավորելով յուրաքանչյուր երկրի հետ համագործակցության տարբեր ձևաչափեր՝ համահունչ իր «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը և տարածաշրջանային ներգրավման ռազմավարությանը: Հայաստանի հետ 2025թ-ի օգոստոսին հաստատված ռազմավարական գործընկերությունը այս գործընթացի վերջին և նշանակալի փուլերից մեկն է, որը նշանավորում է Պեկինի դիվանագիտական և տնտեսական ներկայության ընդլայնման կարևոր քայլը տարածաշրջանում: Այս նոր գործընկերության վերլուծությունը՝ համեմատելով այն Չինաստանի հարաբերությունների հետ Վրաստանի, Ադրբեջանի և այլ հարևան երկրների հետ, հնարավորություն է տալիս ավելի խորությամբ հասկանալու Պեկինի տարածաշրջանային ռազմավարության զարգացող ուղղությունները և Հայաստանի դերը այդ համակարգում: Նման համեմատական դիտանկյունը կարևոր է՝ գնահատելու համար թե՛ հայ-չինական

[123] ՀՀ վարչապետի աշխատակազմ. “Joint statement Between the Republic of Armenia and the People’s Republic of China on the Establishment of a Strategic Partnership”. Օգոստոսի 31, 2025. https://shorturl.at/StP1F

[124] SCMP. “Quick guide to China’s diplomatic levels”.Հունվարի 20, 2016. https://shorturl.at/YrGGG

ռազմավարական գործընկերության խորությունն ու ռազմավարական ուղղվածությունը, և թե՛ դրա հնարավոր ազդեցությունը տարածաշրջանում կապերի և տնտեսական համագործակցության զարգացման վրա:

Վերջերս հաստատված ռազմավարական գործընկերությունը Հայաստանի և Չինաստանի միջև

Կողմերի համատեղ հայտարարությունը ենթադրում է քաղաքական, տնտեսական, գլոբալ, ինչպես նաև գիտատեխնոլոգիական, կրթական և ոլորտային այլ համագործակցություններ: Յուրաքանչյուր հատվածում միջազգային քաղաքականության մեջ ընդունված հիմնարար սկզբունքները վերահաստատելուց բացի՝ հայտարարությունը շոշափում է որոշակի կոնկրետ դիրքորոշումներ և հեռանկարներ: Մասնավորապես.

- Հայաստանը իր աջակցությունն է հայտնում «Մեկ Չինաստան» սկզբունքին՝ նկատի ունենալով Չինաստանի տարածքային ամբողջականությունը (ներառյալ Թայվանը), իսկ Չինաստանն իր հերթին խրախուսում է խաղաղության օրակարգն ու ողջունում «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը:
- Խոսք է գնում հայկական արտադրանքի՝ դեպի Չինաստան արտահանման, մյուս կողմից՝ Հայաստանի ենթակառուցվածքային ներդրումներում չինական ընկերությունների մասնակցությունը խրախուսելու մասին: Առևտրի և ներդրումների ընդլայնման նպատակով դիտարկվում են հատկապես ենթակառուցվածքների, տեղեկատվական տեխնոլոգիաների, վերականգնվող էներգիայի աղբյուրների, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտները:
- Կողմերը պատրաստակամություն են հայտնում կատարելագործել առևտրատնտեսական ոլորտին վերաբերող պայմանագրային-իրավական դաշտը, ազատականացնել և դյուրացնել առևտրի ու ներդրումների ընթացակարգերը: Այս առումով նպատակ է սահմանվում աջակցել, որպեսզի Զարգացման համար ներդրումների դյուրացման համաձայնագիրը (IFD) ներառվի Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) իրավական կառուցվածքում:

- Զբոսաշրջության խթանման նպատակով կողմերը կարևորում են հաստատված առանց վիզայի ռեժիմը, նախանշվում է ապագայում ուղիղ չվերթերի գործարկման հնարավորությունը:
- Գիտատեխնոլոգիական ոլորտում կողմերը պատրաստակամ են համագործակցել համատեղությամբ ստեղծելու նորարարական ինկուբատորներ, տեխնոպարկեր, ինչպես նաև գործակցել, օրինակ, Հայաստանի «Ինժեներական քաղաք» և «Ակադեմիական քաղաք» նախագծերի շրջանակում:
- Կողմերը պայմանավորվում են համագործակցել չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» և Հայաստանի «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունների շրջանակում:
- Չինական կողմը իր պատրաստակամությունն է հայտնել աջակցել Երևանին՝ Շանհայի համագործակցության կազմակերպությանը անդամակցելու գործում: Միաժամանակ, Պեկինը պատրաստ է խորացնել համագործակցությունը հայկական կողմի հետ Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի շրջանակներում:

Ավելի ընդգրկուն վրաց-չինական ռազմավարական գործընկերությունը

Վրաստանի հետ նույնպես Չինաստանի հարաբերությունները ունեն ռազմավարական գործընկերության մակարդակ: Համատեղ հայտարարությունը հրապարկվել է 2023թ-ի օգոստոսին: Այն թե՛ կառուցվածքով, թե՛ բովանդակությամբ շատ նման է հայտարարությանը, որը հրապարակվել է ՀՀ և ՉԺՀ առաջնորդների կողմից այս տարվա օգոստոսին:[125] Այնուամենայնիվ, «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը Վրաստանն առավել ինտենսիվորեն է ներգրավված, քանի որ հանդիսանում է ինչպես այդ նախաձեռնության այդպես էլ Միջին միջանցքի մասնակից երկիր: Այդ հանգամանքով պայմանավորված, հայկական փաստաթղթի համեմատությամբ, առավել լայն են նաև համագործակցության ոլորտները, այդ թվում՝ երկաթուղային ցանցերի արդիականացում և ընդլայնում, չինական արտադրանքի՝ դեպի արևմտյան շուկաներ արտահանման նպատակով Վրաստանի տարանցիկ ենթակառուցվածքների օգտագործում և այլն:

[125] Վրաստանում ՉԺՀ դեսպանություն. “Joint Statement of the People's Republic of China and Georgia on Establishing a Strategic Partnership”. Օգոստոս 07, 2023. https://shorturl.at/eLVqZ

Քննարկվում են նաև Չինաստանի և Վրաստանի միջև 2018թ-ին ստորագրված ազատ առևտրի և 1993թ-ին ստորագրված գիտատեխնոլոգիական համագործակցության մասին համաձայնագրերը թարմացնելու և հարստացնելու հնարավորությունները: Չինաստանը պատրաստակամություն է հայտնում քննարկել Վրաստանում սոցիալական և ենթակառուցվածքային նախագծերի իրականացման համար արտոնյալ վարկեր տրամադրելու հնարավորությունները:

Ադրբեջանի և Չինաստանի համապարփակ-ռազմավարական գործընկերությունը

2024թ-ի հուլիսին Ադրբեջանի ու Չինաստանի միջև հաստատվել է ռազմավարական գործընկերություն, իսկ մեկ տարի չանցած՝ 2025թ-ի ապրիլին երկու երկրների առաջնորդները հանդես են եկել համապարփակ-ռազմավարական գործընկերություն հաստատելու մասին համատեղ հայտարարությամբ:[126][127] Տպավորիչ են ինչպես գործընկերության խորությունը, այնպես էլ ռազմավարականից համապարփակ-ռազմավարական գործընկերության անցում կատարելու արագությունը:

Առևտրի և ներդրումների խրախուսման նպատակով կողմերը պայմանավորվել են ստեղծել աշխատանքային խումբ, նաև ձեռնամուխ լինել սկսելու ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցություններ: Հատկապես ուշադրության կենտրոնում են նավթամթերքները, մետալուրգիան, տեքստիլ արդյունաբերությունը, դեղագործությունը և մեքենաշինական սարքավորումները: Չինաստանը աջակցել է Ադրբեջանի շուտափույթ անդամակցությանը ԱՀԿ-ին:

Կողմերը կարևորել են երկու երկրների միջև «Միջազգային բազմամոդալ տրանսպորտի մասին» համաձայնագրի ստորագրումը: Չինաստանը պատրաստակամություն է հայտնել համագործակցել՝ ընդլայնելու բեռնափոխադրումները Ադրբեջանի ու Չինաստան-Եվրոպա-Չինաստան ճանապարհին գտնվող այլ երկրների միջև:

Իրանի և Չինաստանի համապարփակ-ռազմավարական գործընկերությունը

---

[126] Ադրբեջանի նախագահի աշխատակազմ. “Joint Declaration of the Republic of Azerbaijan and the People’s Republic of China on the establishment of a strategic partnership was adopted in Astana”. Հուլիսի 03, 2024. https://shorturl.at/Vuh1v

[127] Ադրբեջանի նախագահի աշխատակազմ. “Azerbaijan and China signed Joint Statement on Establishment of Comprehensive Strategic Partnership”. Ապրիլի 23, 2025. https://shorturl.at/EmeB1

Իրանի և Չինաստանի միջև 2016թ. հունվարից հաստատվել է համապարփակ-ռազմավարական գործընկերություն: Համատեղ հայտարարությունը թարմացվել է 2023թ-ի փետրվարին:[128] Այն ունի այն հիմնական բաժինները, ինչ մյուս պետությունների հետ համատեղ հայտարարությունների տեքստերը, սակայն կա նաև առանձին բաժին նվիրված անվտանգությանն ու պաշտպանությանը:[129]

Տնտեսական համագործակցության մասով նպատակ է հռչակվել խթանել գյուղատնտեսության ոլորտում երկու երկրների համագործակցությունը, նախատեսվում է մշակել 2023-2030թթ-ի գործողությունների ծրագիր: Նկատենք, որ Չինաստան արտահանվողիրանական գյուղատնտեսական արտադրանքի համար գործում է «կանաչ ուղի» ռեժիմը: Պեկինը պատրաստակամություն է հայտնել օգնել Թեհրանին բարելավել պարենային անվտանգությունը, կառուցել համատեղ լաբորատորիա, գյուղատնտեսության ոլորտում իրականացնել այլ նախագծեր:

Կողմերը համաձայնել են կյանքի կոչել Արդյունաբերական, հանքարդյունաբերական հզորությունների և ներդրումային համագործակցության ամրապնդման փոխըմբռնման հուշագիրը, համագործակցել էներգետիկական ոլորտում, մասնավորապես՝ ընդլայնել Իրանի՝ ֆոտովոլտային էներգիայի արտադրության հզորությունը:

Չինաստանը խոստացել է հրավիրել իրանցի պաշտոնատար անձանց և մասնագետներին՝ մասնակցելու աղքատության նվազեցման, առողջապահության և կանաչ զարգացման ոլորտներում վերապատրաստման դասընթացներին: Չինացի զբոսաշրջիկների համար առանց վիզայի ռեժիմ է սահմանվել Իրանում: Կողմերը պայմանավորվել են նաև փոխադարձաբար ուսանողական կրթաթոշակներ տրամադրել, կազմակերպել փոխանակման ծրագրեր՝ աշակերտների, ուսանողների, ուսուցիչների համար: Չինաստանը մտադիր է գալիք հինգ տարիներին Իրանի համար հատկացնել 100 կրթաթոշակ՝ չիներենի ուսուցիչներ պատրաստելու նպատակով:

Ծավալուն անդրադարձ կա միջազգային խաղաղության պահպանմանը, ընդ որում՝ հայտարարության տեքստում Չինաստանը ընդգծված դեմ է արտահայտվում արտաքին ուժերի միջամտությանը Իրանի ներքին գործերին:

---

[128] China Daily. “Joint statement between China and Iran on the Comprehensive Strategic Partnership”. Հունվարի 23, 2016. https://shorturl.at/CKCUu

[129] ՉԺՀ ԱԳՆ. “ Joint Statement of the People's Republic of China and the Islamic Republic of Iran”, [in Chinese]. Փետրվարի 16, 2023. https://shorturl.at/Ted7q

Թուրք-չինական ռազմավարական գործընկերությունը

Թուրքիան և Չինաստանը ունեն ռազմավարական գործընկերություն 2010թ-ի հոկտեմբերից:[130] Ի տարբերություն տարածաշրջանի մյուս պետությունների հետ մշակված համատեղ հայտարարությունների, որոնքստորագրվել են շատ ավելի ուշ, այս հայտարարության բովանդակությունը աղքատիկ է: Այն հիմնականում անդրադառնում է հարաբերությունների ընդհանուր սկզբունքներին: Կա հղում 2000թ-ի ապրիլի համատեղ հաղորդագրությանը (կոմյունիկե)՝ վերահաստատելով այնտեղ ներկայացված կետերը:[131]

Այդ կոմյունիկեի շրջանակում ստորագրվել էին թուրք-չինական համատեղ տնտեսական և առևտրային կոմիտեի հերթական նիստում ն ընդունված ու էներգետիկայի ոլորտում տնտեսական և տեխնոլոգիական համագործակցության հաստատման մասին արձանագրությունները: Այդտեղ անդրադարձ կա Մետաքսի ճանապարհի վերականգնմանը և Թուրքիայի դերին, որպես կապող օղակ Եվրոպայի ու Չինաստանի միջև:

Ամփոփելով՝ նկատենք, որ Չինաստանը ընդլայնում է գործնկերությունը տարածաշրջանի բոլոր երկրների հետ, ընդ որում՝ Հայաստանի հետ հաստատված ռազմավարական գործընկերությունը վերջինն էր:

Վերը նշվածի ներքո կարող ենք եզրակացնել, որ Չինաստանի՝ տարածաշրջանային ակտիվության հիմնական խթանը Մետաքսի ճանապարհի վերածննդի նպատակով գործարկված «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունն է, որի շրջանակում մեր տարածաշրջանը դարձել է Չինաստանն ու Եվրոպան կապող օղակներից մեկը:

---

[130] ՉԺՀ ԱԳՆ. “ Joint declaration of the People's Republic of China and the Republic of Turkey on the establishment and development of strategic cooperation relations”, [in Chinese]. Հոկտեմբերի 09, 2010. https://shorturl.at/7mb03

[131] Թուրքիայի ԱԳՆ. “Joint Communique Between The Republic Of Turkey And The People´s Republic Of China April 19, 2000, Ankara”. https://tinyurl.com/599ypmfv

Եզրակացություններ

Վերջին տասնամյակում Չինաստանի ներկայությունը Հայաստանում զգալիորեն խորացել է տնտեսական, սոցիալական և մշակութային, և այլ բնագավառներում՝ Պեկինին դարձնելով երկրի զարգացման հարցում ավելի ազդեցիկ դերակատար: Թեև Չինաստանի ներգրավվածության մակարդակը տարբեր բնագավառներում տարբեր է, ընդհանուր միտումը ցույց է տալիս բոլոր ուղղություններով հարաբերությունների խորացում՝ ընդգրկելով առևտուրը, ենթակառուցվածքները, կրթությունը, տուրիզմը և դիվանագիտությունը: Այս գործընթացը մեծապես ձևավորվում է Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության և դրա տարածաշրջանային ռազմավարական նպատակների շրջանակում: Խորացող համագործակցությունը, բացի նոր հնարավորություններից, առաջացնում է նաև մի շարք տնտեսական, քաղաքական և ինստիտուցիոնալ ռիսկեր Հայաստանի համար:

Տնտեսական և առևտրային հարաբերություններ

Չինաստանը ներկայումս հանդիսանում է Հայաստանի ներմուծման երկրորդ խոշոր աղբյուրը և արտահանման հիմնական ուղղություններից մեկը: Երկկողմ առևտրաշրջանառության ծավալները վերջին տարիներին զգալի աճ են գրանցել. ներմուծման տեսանկյունից գերակշռում են մեքենաները, սարքավորումները և տրանսպորտային միջոցները, իսկ արտահանման մասով՝ պղնձի հանքաքարն ու խտանյութը: Պետք է նշել, որ պղնձի հանքաքարը և խտանյութը նաև հանդիսանում է Հայաստանի հիմնական արտահանման ապրանքներից մեկը: Վերջին 15 տարիների ընթացքում Չինաստանի մասնաբաժինը Հայաստանի պղնձի արտահանման մեջ աճել է շուրջ 6 անգամ՝ 12%-ից հասնելով 78%-ի: Այսպիսի բարձր կենտրոնացվածությունը մեծացնում է Հայաստանի արտահանման խոցելիությունը: Ցանկացած անկայունություն՝ լինի այն արտաքին, տնտեսական թե դիվանագիտական բնույթի, կարող է էական ազդեցություն ունենալ Հայաստանի արտահանման ցուցանիշների և մակրոտնտեսական կայունության վրա: Դրան զուգահեռ, 2022թ-ից սկսած, Չինաստանում արտադրված արևմտյան ապրանքանիշերի դեպի Ռուսաստան վերաարտահանումն էլ ավելի է խթանել հայ-չինական առևտրի ծավալների աճը:

Չնայած Հայաստանի արտահանման կառուցվածքային տատանումներին՝ Չինաստանի դերը որպես կարևոր առևտրային գործընկեր մնում է կայուն: ԵԱՏՄ–

Չինաստան համագործակցության ճանապարհային քարտեզի 2025թ-ի թարմացումը, Հայաստանի հետաքրքրվածությունը Շանհայի համագործակցության կազմակերպությունում իր կարգավիճակի բարձրացմամբ, ինչպես նաև «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը ցույց են տալիս, որ առաջիկա տարիներին Հայաստանի և Չինաստանի միջև առևտրատնտեսական ու լոգիստիկ կապերը միտված են շարունակական ամրապնդման:

Ներդրումներ և ենթակառուցվածքներ

Չնայած չինական ուղղակի օտարերկրյա ներդրումները Հայաստանում դեռևս մնում են սահմանափակ՝ 2024թ-ի դրությամբ կազմելով ընդհանուր ներդրումների զուտ պաշարների ընդամենը 0.01%-ը, Չինաստանի շինարարական ընկերությունների ներգրավվածությունը երկրի ենթակառուցվածքային զարգացման մեջ աստիճանաբար ավելանում է: Չինաստանի պետական ընկերությունների ներգրավվածությունը խոշոր նախագծերում՝ ինչպես «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղու, Կապսի ջրամբարի և Մասրիկ-1 արևային էլեկտրակայանի կառուցման ծրագրերում, վկայում է Չինաստանի աճող ներկայության մասին այնպիսի ռազմավարական նշանակության ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան և տրանսպորտը:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը դարձել է հայ–չինական համագործակցության ամենադինամիկ զարգացող ուղղություններից մեկը: 2022–2024թթ-ի ընթացքում Չինաստանից Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվը աճել է շուրջ 6 անգամ, ինչի շնորհիվ Չինաստանը հայտնվել է Հայաստանի զբոսաշրջության յոթ առաջատար երկրների շարքում: Վիզային ռեժիմի ազատականացումը, նոր ուղիղ ավիաչվերթների գործարկումը, ինչպես նաև մշակութային միջոցառումների աճը (փառատոններ, ցուցահանդեսներ), այդ թվում՝ երկկողմ հարաբերություններն առաջմղող հասարակական կազմակերպությունների գործունեության միջոցով, նպաստել են Չինաստանում Հայաստանի ճանաչելիության աճին: Այս միտումները վկայում են, Հայաստանի նկատմամբ Չինաստանի աճող հետաքրքրվածության մասին:

Մարդասիրական օգնություն

Չինաստանի կողմից Հայաստանին տրամադրվող օգնությունը՝ հիմնականում դրամաշնորհների, սարքավորումների նվիրատվության և շինարարական ծրագրերի տեսքով, մի կողմից լրացնում է պետական ներդրումների բացերը, իսկ մյուս կողմից արտացոլում է Պեկինի՝ զարգացման աջակցությունն ազդեցության գործիք դարձնելու ռազմավարությունը: Բարձր տեսանելիություն ունեցող ենթակառուցվածքային ու մեդիա նախագծերի ուղղվածությունը, օրինակ՝ Հայաստանի Հանրային հեռուստաընկերության նոր տաղավարի կառուցումը, վկայում է, որ համագործակցությունը աստիճանաբար տեղափոխվում է զուտ զարգացման տրամաբանությունից դեպի սիմվոլիկ և փափուկ ուժի գործիքակազմով պայմանավորված ներգրավվածություն:

Կրթություն և մշակույթ

Կրթությունն այսօր Չինաստանի «փափուկ ուժի» առանցքային բաղադրիչներից մեկն է Հայաստանում: Վերջին տասնամյակում կրթական և մշակութային նախաձեռնությունների ընդլայնումը զգալիորեն խորացրել է չինական ներկայությունը հայկական ակադեմիական միջավայրում:

Երևանում գործող Կոնֆուցիոսի ինստիտուտը՝ առաջինը Հարավային Կովկասում, և Հայ–չինական բարեկամության դպրոցը հնարավորություն են տվել հազարավոր ցանկացողների ուսումնասիրել չինարեն լեզուն և ծանոթանալ չինական մշակույթին: Բացի այդ, վերջին տարիներին ակտիվացել է հայկական և չինական բուհերի համագործակցությունը, որը ներառում է կրթաթոշակային ծրագրեր, համատեղ հետազոտություններ և գիտական հրատարակություններ: 2025 թ-ի դրությամբ արդեն հաստատվել է առնվազն 37 ինստիտուցիոնալ կապ հայկական և չինական համալսարանների միջև: Այս նախաձեռնությունները ամրապնդում Չինաստանի ներկայությունը Հայաստանի կրթական համակարգում՝ ստեղծելով հուսալի հիմք երկկողմ հարաբերությունների երկարաժամկետ և ավելի սերտ զարգացման համար:

Ռազմավարական գործընկերություն

2025թ-ի օգոստոսին Հայաստան–Չինաստան ռազմավարական գործընկերության հաստատումը դարձավ երկկողմ հարաբերությունների շրջադարձային կետ՝ ներառելով Չինաստանի Հարավային Կովկասում խորացող տարածաշրջանային ներգրավվածության ընդհանուր շրջանակում: Այս համագործակցությունը լրացնում է է Չինաստանի՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ ձևավորված նմանատիպ ձևաչափով հարաբերություններին՝ ընդգծելով տարածաշրջանի ընդհանուր նշանակությունը Պեկինի արտաքին քաղաքականության համար: Ռազմավարական գործընկերության

շրջանակում կենտրոնական տեղ են զբաղեցնում կապը, տնտեսական համագործակցությունը, ժողովուրդների միջև հարաբերությունները, որոնք հիմքեր են ստեղծում կայուն գործընկերության համար:

Եզրակացնելով կարող ենք ասել, որ Չինաստանի ազդեցությունը Հայաստանում աստիճանաբար վերափոխվում է՝ անցնելով զուտ տնտեսական հարաբերություններից դեպի ավելի լայն՝ ռազմավարական, կրթական և ինստիտուցիոնալ գործընկերության: Այս փոփոխությունը բացում է նոր հնարավորություններ, սակայն միաժամանակ առաջացնում է նաև նոր կախվածություններ և մարտահրավերներ: Հայաստանի համար հիմնական խնդիրն է՝ օգտագործել համագործակցության հնարավորությունները տնտեսական դիվերսիֆիկացիայի, զարգացման և միջազգային ինտեգրման նպատակներով՝ առանց վտանգելու իր տնտեսական կամ քաղաքական ինքնուրույնությունը: